ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-Ն: ՀԱՍՑԵ՝ ք. ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32: ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63 • (091) 45 90 47 • (077) 06 28 02

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գինը՝ 100 դրամ:

ԵՐԵՔՇԱԲԹԻ
3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 33 (306)

www.syuniacyerkir.am

Իրարից սեր են խլում
Մարդիկ,
Իրարից տեր են խլում
Մարդիկ:
Դերասաններ են դարձել
Բոլորը,
Իրարից դեր են խլում
Մարդիկ...

ՄԱՐԻԱ ՀԱԿՈԲՅԱՆ
«Մարինե վանքում»



Համակարգի երեք էկերից մեկը՝ Տաթեւէկը

Ամերիկյան ընկերությունը $180 միլիոնով գնում է Որոտանի էկերի համակարգը

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Ամերիկյան «Կոնտուր գլոբալ» (Contour Global) ընկերությունը 180 մլն դոլարի ներդրում կանի Հայաստանի էներգետիկ ոլորտում: Այս մասին ասված է ԱՄՆ պետքարտուղարության հրապարակած հաղորդագրությունում, որը վերաբերում է Հայաստանի ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանի ղեկավարած պատվիրակության՝ նոյեմբերի 22-ին Վաշինգտոն կատարած այցին, որի նպատակն է եղել Տնտեսական հարցերով հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովի նիստին մասնակցելը: Պատվիրակության կազմում են եղել նաեւ փոխարտգործնախարար Աշոտ Հովակիմյանը եւ ԱՄՆ-ում Հայաստանի դեսպան Թաքուլ Մարգարյանը, որոնց ընդունել է Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով պետքարտուղարի տեղակալ Էրիկ Ռուբինը: Ամերիկյան կողմից ներկայացված են եղել նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը եւ Հայաստանում ԱՄՆ ՄԶԳ (USAID) առաքելության տնօրեն Քարեն Հիլիարդը: «Հայաստանը եւ ԱՄՆ-ը ողջունել են ամերիկյան «Կոնտուր գլոբալ» ընկերության կողմից Հայաստանի հիդրոէներգետիկ ոլորտում $180 մլն-ի ներդրումը: Ակնկալվում է, որ այն մասամբ կֆինանսավորի ԱՄՆ

Շարունակությունը՝ էջ 2

Մարզի գյուղացիները՝ մսամթերման անլուծելի խնդրի դեմ հանդիման

Հանքարդյունաբերության գերշահույթներից կուրացած եւ իրական Սյունիքից օտարված ցեցերն այդպես էլ չեն տեսնում, որ մարզի գյուղացին չի կարողանում մթերել սեփական անասունը, ինչից պետք է ստանա իր ընտանիքի գոյապահպանման միակ կամ գրեթե միակ միջոցը

ԱՆՕԳՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Մեզանից յուրաքանչյուրը հավանաբար հիշում է, թե ամեն տարվա ամռանն ու աշնանն իշխանական մեքենան եւ դրան սպասարկող քարոզչամիջոցներն ինչպիսի խանդավառությամբ, աղմուկ-աղաղակով ու հետեւողականությամբ են զբաղվում Արարատյան դաշտի ծիրանի, լոլիկի, խաղողի մթերման հարցով: Մայրաքաղաքային հեռուստաալիքները նույնիսկ ցուցադրում են նախարարի, փոխնախարարի, մարզպետի վրա գոռգոռացող, հոխորտացող գյուղացիների, ովքեր պահանջում են բերքը մթերել իրենց ուզած գնով, թե չէ ավտոմայրուղին կփակեն…

Շատ լավ է, անշուշտ, որ իշխանությունները զբաղվում են մրգերի ու բանջարեղենի որոշ տեսակների մթերման (իրացման) հարցով: Բայց եւ տարօրինակ է, որ իշխանությունների այդօրինակ հետաքրքրությունները սահմանափակվում են միայն Արարատյան դաշտով ու միայն ծիրանով, լոլիկով ու խաղողով…

Մինչդեռ Արարատյան դաշտից հարավ-արեւելք մի ուրիշ Հայաստան էլ կա՝ Սյունիք անուն, որ մեր հանրապետության ամենախոշոր անասնապահական շրջաններից է, որի անասնապահական ներուժը չի օգտագործվում ըստ պատշաճի, եղած անասունների մթերման գործն էլ լիովին տապալված է: Սյունիքի մարզում դժվարությամբ կարելի է գտնել անասնապահությամբ զբաղվող գոնե մեկ ընտանիք, որ կանգնած չլինի մսամթերման խնդրի դեմ հանդիման:

Սյունիքի մարզպետարան

Եվ բոլոր գյուղերում, որտեղ լինում ենք, մեզ հարցնում են՝ ո՞վ է, վերջապես, Սյունիքում պե-

Շարունակությունը՝ էջ 6

Համապիրությունների ձեւական գոյությունը վերանայելու ժամանակը

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Կապանի քաղաքային տնտեսության հիմնախնդիրներից մեկը (եթե ոչ գլխավորը) բազմաբնակարան շենքերի պահպանության ներկայիս դրվածքն է: Խնդրի կարեւորությունը հասկանալու համար հիշենք, որ քաղաքում կա 253 բազմաբնակարան շենք՝ 10989 բնակարանով, ինչը նշանակում է, որ համայնքի բնակչության մոտ 80 տոկոսն ապրում է բազմաբնակարան շենքերում: Եվ հարցը, որ բխում է դրանից, հետեւյալն է՝ իսկ ինչպե՞ս են պահպանվում այդ շենքերը, կառավարման ի՞նչ մեխանիզմ է կիրառվում:

Հարցը նաեւ մի էական առանձնահատկություն ունի՝ քաղաքի բազմաբնակարան շենքերը կառուցվել են խորհրդային տարիներին եւ ունեն (զգալի մասը) գրեթե հիսուն տարվա պատմություն: Եվ եթե խորհրդային տարիներին գործել է այդ շենքերի կառավարման ու պահպանման որոշակի համակարգ ու ինչ-որ չափով լուծվել են այդ շենքերում ծագող խնդիրները, ապա վերջին քսան եւ ավելի տարիներին դրանք անուշադրության են մատնվել եւ շարունակում են մնալ ուշադրությունից դուրս:

Հարցը եւս մեկ առանձնահատկություն ունի. այդ շենքերը շատ վաղուց բնակիչների սեփականությունն են, ասել է թե՝ բնակիչներն էլ պետք է մտահոգվեն դրանց պահպանմամբ, բայց… Բնակիչների զգալի մասը, հին օրերից եկող իներցիայի ուժով, կարծում է, թե պետությունը (այս դեպքում՝ քաղաքապետարանը) պարտավոր է լուծել շենքում առաջացող խնդիրները, իսկ պետությունը, ինչպես տեսնում ենք, շատ դեպքերում անտարբեր հայեցողի դերում է:

Մինչդեռ բազմաբնակարան շենքերում առկա են բազում խնդիրներ, որոնց կարելի է բախվել շենքերի բակերից մինչեւ տանիք: Բակերն անբարեկարգ են, չկա պատշաճ լուսավորություն, շատ տեղերում ասֆալտապատումից գրեթե հետք չի մնացել, շենքերի մուտքերը չունեն դռներ, քայքայված են աստիճանահարթակները, բացակայում են մուտքերի պատուհանները, բազրիքները կիսաքանդ են, ներքին ջրամատակարարման եւ ջրահեռացման ցանցերը մեծամասամբ վթարային են, կրող կառուցվածքները քայքայված են, նկուղները խոնավ են ջրային արտաթողումներից, վերելակները կամ չեն շահագործվում, կամ վթարային վիճակում են, տանիքները ենթակա են հիմնանորոգման եւ այլն: Տխուր այս պատկերին կարելի է բախվել գրեթե ամեն մի շենքում…

Օրենսդիրը, այնուհանդերձ, փորձել է կարգավորել խնդրո առարկային առնչվող իրավական դաշտը. նկատի ունեմ մասնավորապես «Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին» եւ «Համատիրությունների մասին» ՀՀ

Շարունակությունը՝ էջ 7

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ● 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ ● № 33 (306)

Ամերիկյան ընկերությունը $180 միլիոնով գնում է Որոտանի հէկերի համակարգը

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Սկիզբը՝ էջ 1

Անդրծովյան մասնավոր ներդրումային կորպորացիան (U.S. Overseas Private Investment Corporation), կլինի Հայաստանի պատմության մեջ ամերիկյան ամենախոշոր մասնավոր ներդրումը, ինչպես նաեւ ամերիկյան առաջին ներդրումը Հայաստանի էներգետիկ ոլորտում», - նշված է հաղորդագրությունում:

Ըստ մայրաքաղաքային մի շարք լրատվամիջոցների՝ «Կոնտուր գլոբալ» ընկերության հնարավոր ներդրումն առնչվում է «Որոտանի հէկերի համակարգ» ՓԲԸ-ի ձեռք բերմանը:

Որոտանի հէկերի համակարգի սեփականաշնորհման ուղղությամբ իրականացվող առայժմ հույժ գաղտնի գործընթացին զուգահեռ ակտիվանում են խոսակցությունները «Կոնտուր գլոբալ» ընկերության եւ Հայաստանի իշխանական վերնախավի որոշ դեմքերի առնչությունների մասին:

Հ.Գ. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) նոյեմբերի 27-ի իր արտահերթ նիստում համաձայնել է վաճառել «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի գույքը ամերիկյան «Կոնտուր գլոբալ հիդրոկասկադ» ընկերությանը:

ՀԾԿՀ հրապարակած տեղեկանքի համաձայն՝ «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» ՓԲԸ-ի գույքն է՝ Սպանդարյանի հիդրոէլեկտրակայանը, Շամբի հիդրոէլեկտրակայանը, Տաթեւի հիդրոէլեկտրակայանը եւ նշված հիդրոէլեկտրակայանների շահագործման համար անհրաժեշտ շենքեր, շինություններ եւ այլ օժանդակ սարքավորումներ:

Շաքեում ստեղծվում է արոտային տնտեսությամբ զբաղվող կոոպերատիվ

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Շաքեի համայնքի ղեկավար Վահան Ղազարյանը

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԵՐԸ

– Պարոն Ղազարյան, նախ՝ ներկայացրեք, խնդրեմ, Շաքե համայնքը:

– Սիսիանի տարածաշրջանի (Անգեղակոթից ու Բռնակոթից հետո) ամենախոշոր համայնքն է: Բնակչությունը՝ 1390, տարածքը մոտ՝ 7 հազար հա, որից վարելահող՝ 1377հա: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ. անասնապահություն, հացահատիկի մշակություն: Գյուղի տարածքում կան բազալտի հանքավայրեր, քարի մշակման արտադրամասեր: Գյուղի տարածքում է Շաքեի հայտնի ջրվեժը: Գյուղի տարածքով հոսող Շաքե գետի վրա կառուցված է հիդրոէլեկտրակայան: Կա 285 տնտեսություն: Գյուղն ունի եռահարկ դպրոց, որտեղ սովորում է 160 երեխա, եւ մանկապարտեզ՝ 43 երեխայով: Մանկապարտեզի գործունեության համար լրավճար ենք ստանում, մեզ օգնում է ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագիրը: Գյուղն ունի գրադարան՝ 7 հազար կտոր գրքով, ակումբ:

– Շաքեն մարզի այն համայնքներից է, որտեղ մինչեւ Արցախյան շարժում կար երկու համայնք՝ հայկական եւ ադրբեջանական: Ադրբեջանցիները գնացին, հիմա գյուղում միայն տեղացինե՞րն են բնակվում, թե՞ դրսից եկածները նույնպես:

– Հայտնի իրադարձություններից հետո հարեւան գյուղերից էլ բնակվելու եկան մեզ մոտ: Եղան նաեւ Ադրբեջանից բռնագաղթածներ, որոնցից շատերը հեռացել են գյուղից: Նրանցից ոմանք դեռեւս գյուղում շարունակում են մնալ հողի ու բնակելի տների սեփականատեր: Չի բացառվում, որ վերջիններս երբեւէ վերադառնան Շաքե:

– Նորեկները, այդ թվում՝ բռնագաղթածները, անցած 20-25 տարում, կարծում ենք, ինտեգրվել են գյուղին եւ իրենց շաքեցի են համարում:

– Նախկին քաղաքաբնակների համար, բնականաբար, դժվար էր գյուղական կյանքին հարմարվելը: Ոմանք ինտեգրվեցին, ոմանք՝ ոչ: Նորեկները ժամանակի ընթացքում սկսեցին տնտեսություն վարել, հող մշակել, անասուն պահել: Հնաբնակների հետ կան նորմալ, բնականոն շփումներ, կան ամուսնություններ: Եվ եթե ավագ սերնդի ներկայացուցիչների համար դեռեւս հոգեբանական փոքրիկ բարդություններ կան, ապա երեխաների համար Շաքեն իրենց ծննդավայրն ու հարազատ բնօրրանն է:

– Գյուղ գալուց առաջ տեղեկացանք, որ առաջին հայացքից ջրառատ Շաքեն ջրի խնդիրներ ունի՝ ե՛ւ խմելու, ե՛ւ ոռոգման: Ինչպե՞ս հասկանալ:

– Ամռանն իրոք ունենում ենք խմելու ջրի խնդիր, որովհետեւ տնամերձների զգալի մասը ոռոգվում է խմելու ջրով, քանզի ոռոգման ջրի խնդիր էլ ունենք, թեեւ գյուղի միջով Շաքե գետակն է հոսում: Խմելու ջրի խնդիրը ներքին ջրատար ցանցի խախուտ լինելով է պայմանավորված: Եթե մեզ հաջողվի հիմնանորոգել ներքին ցանցը, օրվա կարգավորիչ ջրամբարներ կառուցել, ապա խնդիրը կլուծվի: Ցավոք, այդ խնդիրը հնարավոր չէ լուծել սեփական ուժերով: Ինչ վերաբերում է ոռոգման համակարգին, ապա մեր հույսը Սպանդարյան ջրանցքի վերականգնումն է, այլապես պոմպակայաններով հարց լուծելն անհեռանկար է եւ շատ ծախսատար:

– Ներկայացրեք, խնդրեմ, համայնքային բյուջեն:

– Համայնքի տարեկան բյուջեն մոտ 25 մլն դրամ է, որից 11 միլիոնը՝ սեփական եկամուտներ: 2012-ին սեփական եկամուտների առաջադրանքը հիմնականում կատարեցինք՝ հողի հարկը՝ 100 տոկոսով, գույքահարկը՝ 90 տոկոսով: Կան մարդիկ, ովքեր չեն ցանկանում շահագործել սեփական ավտոմեքենան, ինչի համար եւ գույքահարկ չեն

Շարունակությունը՝ էջ 4

Լուրեր

Մեղրու սահմանապահ ջոկատի հրամանատար, գնդապետ Անատոլի Շադրինն այսուհետ կգլխավորի Գյումրու սահմանապահ ջոկատը, որն իրականացնում է հայ-թուրքական սահմանի մի հատվածի պահպանությունը: Նա Մեղրու սահմանապահ զորամասը գլխավորում էր 2011թ. ապրիլի 12-ից: Գնդապետին ծառայության նոր վայր ճանապարհելուն էր նվիրված դեկտեմբերի 1-ին Մեղրիում տեղի ունեցած հանդիսությունը, որը վեր ածվեց հայ-ռուսական բարեկամության, մշակութային յուրօրինակ միջոցառման: Հնչեցին ելույթներ, որոնց հեղինակները, ողջերթի խոսք ասելուց զատ, հավաստեցին՝ Անատոլի Շադրինը ոչ միայն շարունակել է սահմանապահ ջոկատի ու Մեղրու տարածաշրջանի բնակչության սերտ համագործակցությունը, այլեւ բազմապատկել տասնամյակներ շարունակ ստեղծված բարի ավանդույթները:

Ըստ iravaban.net-ի Սյունիքի մարզի դատախազ է նշանակվել արդարադատության երկրորդ դասի խորհրդական Արմեն Ալբերտի Աֆանդյանը, ով ազատվել է ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարեւոր գործերով քննչական վարչության ավագ դատախազի պաշտոնից:

Նոյեմբերի 26-ին Մայր աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի հանդիսությունների սրահում ամփոփվեցին հանրակրթական դպրոցների ուսուցիչների հանրապետական ամենամյա մրցույթի արդյունքները, որ անցկացվում է արդեն 10-րդ անգամ եւ նպատակ ունի խրախուսել այն ուսուցիչներին, ովքեր աչքի են ընկնում ուսուցման ժամանակակից մեթոդներով եւ կուտակել են գիտելիքի զգալի պաշար: Հայ առաքելական եկեղեցու ու ՀՀ կրթության եւ գիտության նախարարության կազմակերպած «Լավագույն ուսուցիչ-2013» մրցույթին մասնակցում էին նաեւ Սյունիքի մարզի ներկայացուցիչներ: Կապանի N2 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Նինել Սարգսյանն արժանացավ առաջին մրցանակի, իսկ N1 հիմնական դպրոցի դասավար Լուսինե Բալայանն արժանացավ երկրորդ մրցանակի: Մասնակիցները ստացան վկայական եւ դրամական պարգեւ:

Նոյեմբերի 18-ին Գորիսի քաղաքապետարանում տեղի ունեցավ հայ-ֆրանսիական համագործակցության ծրագրերի հերթական քննարկում, որին մասնակցում էին Գորիսի քաղաքապետ Նելսոն Ոսկանյանը, SPFA կազմակերպության ծրագրերի ղեկավար Ժակ Մաթոսյանը եւ SPFA կազմակերպության երեւանյան գրասենյակի տնօրեն Հաբեթնակ Հակոբյանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին գալիք տարի կատարվելիք աշխատանքները:

Անդրադարձ Համո Սահյանի բանաստեղծական աշխարհին

ՄՐՑՈՒՅԹ



Սիսիանի քաղաքապետարանը եւ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը հայ մեծ բանաստեղծ Համո Սահյանի 100-ամյակի կապակցությամբ հայտարարում են արձակ եւ չափածո խոսքի մրցույթ. շարադրություն, բանաստեղծություն, խոհ եւ այլն:

Մրցույթի թեման արդեն իսկ ազդարարեցինք վերնագրում՝ «Անդրադարձ Համո Սահյանի բանաստեղծական աշխարհին»: Վերնագրի ընտրության հարցում մրցույթի յուրաքանչյուր մասնակից ազատ է:

Մրցույթին կարող են մասնակցել մարզի հանրակրթական դպրոցների սովորողները, միջին -մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, ինչպես նաեւ Սյունիքի մարզի մինչեւ 30 տարեկան տղաներն ու աղջիկները:

Մրցույթի մասնակիցների խոսքը մինչեւ 2014թ. հունվարի 1-ը պետք է ներկայացնել «Սյունյաց երկրի» խմբագրություն: Դրանք կքննարկվեն խմբագրության գեղարվեստական խորհրդում եւ Համո Սահյանի 100-ամյակի նախապատրաստական աշխատանքների կազմկոմիտեում (Սիսիանի քաղաքապետարանում ստեղծված), որոնք էլ կորոշեն լավագույն երեք աշխատանքը:

Լավագույն գործերի հեղինակները կարժանանան դրամական պարգեւի: Մրցանակակիր նյութերը կհրապարակվեն (հեղինակի լուսանկարով) «Սյունյաց երկիր» թերթի՝ Համո Սահյանի 100-ամյակին նվիրված հատուկ համարում:

Մրցույթին առնչվող հարցերով կարող եք դիմել թերթի խմբագրություն:

«Սյունյաց երկիր»

Շինուհայրցի Սամվել Միքայելյանի հիշատակարանը

ՈՉ ՈՔ ՉԻ ՄՈՌԱՑՎԵԼ

Արցախյան ազատամարտում զոհված շինուհայրցի վեց ազատամարտիկի մասին հուշերի հավաքումն ու գրառումը շարունակում է զբաղեցնել Սամվել Միքայելյանին: Մինչ այդ «Սյունյաց երկրում» տպագրվել էին նրա հոդվածներն ազատամարտիկներ Սամվել Հովհաննիսյանի (20 ապրիլի 2013թ.), Ստյոպա Սարգսյանի (21 մարտի 2013թ.), Սենիկ Հակոբյանի (15 փետրվարի 2013թ.) մասին: Ներկայացնում ենք նրա գրառումներից եւս երկուսը:

Նա գնաց մարտադաշտից դուրս բերելու հրամանատարի դին, բայց...

Շինուհայր գյուղի բնակիչ Սամվել Հովհաննիսյանը նոր էր վերադարձել բանակից. ծառայում էր Ուկրաինայի Զապորոժիե քաղաքում: Եվ առաջիններից մեկն էր, որ անդամագրվեց Գորիսի երկրապահ ջոկատին: Նա լավագույնս էր կատարում հրամանատարի կողմից իր առջեւ դրված խնդիրները: Հարգանք էր վայելում ազատամարտիկների շրջանում: Հրամանատար Միշա Գրիգորյանի կողմից էլ ստացավ «Հոպար» մականունը: Իմիջիայլոց, այդ մականունը գրված է նրա շիրմաքարի վրա…

Սամվել Հովհաննիսյանը մանկության տարիներից գյուղում աչքի էր ընկնում ճարպկությամբ ու աշխատասիրությամբ, ընկերասիրությամբ ու մարդամոտությամբ: Այդ որակները դրսեւորվեցին նաեւ ռազմի դաշտում: Պատահական չէ, որ մարտական ընկերները հիշում են՝ Սամվելն ընկերոջ համար կյանքը զոհաբերելու պատրաստ անձնավորություն էր:

Սամվել Հովհաննիսյանը հերոսաբար ընկավ մարտադաշտում: Նրա հրամանատարը՝ հալիձորցի Միշա Գրիգորյանը, ընկել էր ադրբեջանցիների ծուղակի մեջ եւ 1992թ. մարտի 21-ին զոհվել անհավասար մարտում: Հարկավոր էր գնալ հրամանատարի հետեւից... Խնդիրը բարդ էր, քանի որ (ըստ հետախույզների հաղորդած տեղեկությունների) տարածքը շարունակում էին վերահսկել ադրբեջանցիները: Խնդրի լուծումը, այդուհանդերձ, իր վրա վերցրեց Սամվելը: Ազատամարտիկներից շատերը հորդորեցին նրան՝ հետ կանգնել այդ քայլից, քանի որ մեծ էր շրջափակման մեջ ընկնելու հավանականությունը: Սակայն Հոպարը հետ չկանգնեց իր որոշումից, վերցրեց եւս մի քանի տասնյակ փամփուշտ եւ շարժվեց դեպի անտառի խորքը: Գնում էր հետ բերելու նահատակված հրամանատարի դին... Բայց, ինչպես եւ սպասվում էր, նա նույնպես հայտնվեց ծուղակում:

Ընկերները պատմում են, որ Հոպարը քաջ ու անվախ զինվորին վայել կռիվ է տվել մինչեւ վերջ եւ բազում ելուզակ ոչնչացրել, որից հետո ընկել թշնամու գնդակից:

Միշա Գրիգորյան հրամանատարի եւ Սամվել Հովհաննիսյան քաջ մարտիկի անշնչացած մարմինները 36 օր գտնվում էին ադրբեջանցիների մոտ: Երկարատեւ բանակցություններից հետո միայն հաջողվեց հետ բերել նրանց աճյունները եւ հողին հանձնել հայրենի Հալիձորում ու Շինուհայրում:

Բազմաթիվ շինուհայրցիներ գյուղի գերեզմանում լինելիս անպայման այցելում են Հոպարի՝ Սամվել Հովհաննիսյանի շիրմին եւ խոնարհվում նրա անմեռ հիշատակի առջեւ:

Սամվել Հովհաննիսյանի ծննդյան օրն ապրիլի 18-ն է (ծնվել է 1968թ.): Այդ օրը նրա մանկության եւ պատանեկության, ինչպես եւ զինակից ընկերներն այցի են գնում Հոպարի գերեզմանին…

Հարգանք նահատակ ազատամարտիկների հիշատակին

Մեր վերջին ազատամարտի նահատակներից մեկն էլ շինուհայրցի Հայկ Միրզոյանն է:

Ծնվել է 1959թ. ապրիլի 5-ին Շինուհայր գյուղում: 1967-77թթ. սովորել եւ ավարտել է գյուղի Սուրեն Թովմասյանի անվան միջնակարգ դպրոցը: 1978-80թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատել է ռետինե կոշիկների գործարանում՝ մամլող բանվոր: Ամուսնացել է Հալիձոր գյուղի բնակչուհի Համեստ Միրզոյանի հետ, ունեցել երեք զավակ: Կամավոր զինվորագրվել է Գորիսի երկրապահ ջոկատին եւ մասնակցել Ղարաբաղի ազատության համար մղվող պայքարին:

...Լաչինի միջանցքում կատաղի մարտեր էին տեղի ունենում: Մարտերը հատկապես թեժ էին Հոչազ գյուղի մերձակայքում: Այդ մարտերում էլ՝ 1992 թվականին, թշնամու գնդակից զոհվեց Հայկ Միրզոյանը:

Մարտական ընկերներին հաջողվեց Հայկի դին դուրս բերել մարտադաշտից եւ հասցնել Գորիսի հիվանդանոց, որտեղից էլ՝ Շինուհայր ու հանձնել մայր հողին:

Հ.Գ.-1

Երբ Հայկի մայրը՝ Սիրան տատն իմացավ, որ «Սյունյաց երկրում» խոսք եմ ասելու որդու մասին, պատվիրեց անպայման հիշատակել նաեւ Արայիկ Մկրտչյանի (Զարգանդի) անունը, ով նույնպես իր կյանքը զոհաբերեց հանուն Արցախի ազատության՝ 1992 թվականին: Արայիկ Մկրտչյանի մայրը՝ Աշխեն տատը, որ մահացավ 93 տարեկանում, գրեթե ամեն օր այցելում էր որդու շիրմին, իսկ ձմռան ամիսներին՝ բահով՝ որդու շիրիմը ձյունից մաքրելու համար:

Հ.Գ.-2

Հայկ Միրզոյանի մահվան օրը թշնամու գնդակից ընկավ նաեւ նրա ընկերը՝ Սենիկ Հակոբյանը: Հարգանք Հայկ Միրզոյանի, Արայիկ Մկրտչյանի եւ Սենիկ Հակոբյանի հիշատակին:



Հայկ Միրզոյան



Արայիկ Մկրտչյան (Զարգանդ)

գ. Շինուհայր

ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին

Հարգելի՛ պարոն նախագահ

Ես առաջին կարգի հաշմանդամ եմ, 85 տարեկան, ամուսինս տարիներ առաջ է մահացել, Հայրենական մեծ պատերազմի մասնակից է եղել, բռնագաղթած: Ապրում եմ ծայրահեղ աղքատության մեջ, չունեմ օգնողներ, դուստրս է հիմա ինձ խնամում, չի աշխատում, երկրորդ կարգի հաշմանդամ է: Տարիներ առաջ իմ խնայողությունները ԽՍՀՄ բանկում ավանդ եմ թողել: Խնդրում եմ որեւէ կերպ աջակցել դրանք ստանալու հարցում: Դեղորայքը, որ ստանում եմ, բավականին թանկ է, չեմ հասցնում ձեռք բերել: Երկար տարիներ տառապում եմ օնկոլոգիական հիվանդությամբ: Խնդրում եմ Ձեր միջամտությունը՝ տրամադրելու իմ գումարները, որպեսզի կարողանամ հոգալ իմ բուժման ծախսերը: Հուսով եմ, որ Դուք կընդառաջեք ինձ այդ հարցում:

Ծովիկ Յոլյան

Հասցե՝ ք. Գորիս, Խորենացի 1 նրբանցք

Գայանե Դավթյանի ոդիսականը, կարծեք, ավարտվում է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«Սյունյաց երկիրը» Գայանե Դավթյանի խնդրին անդրադարձել է 2013թ. մայիսի 3-ի, հունիսի 1-ի, ինչպես եւ հունիսի 29-ի համարներում: Վերջին անգամ ընթերցողին տեղեկացրել էինք, որ ս.թ. հունիսի 24-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել Ներսես Խաչատրյանի (Գայանե Դավթյանի ամուսնու) ներկայացրած միջնորդությունը՝ դատական որոշման կատարումը հետաձգելու մասին: Որոշվել էր՝ մերժել Ներսես Խաչատրյանի միջնորդությունը՝ դատապարտյալ Գայանե Դավթյանի՝ որպես ազատազրկման ենթակա անձի նկատմամբ կայացված դատական ակտի կատարումը ծանր հիվանդության պատճառով հետաձգելու մասին, ինչը նշանակում էր, որ Գայանե Դավթյանի ազատազրկման վերաբերյալ որոշման կատարումը չի հետաձգվի:

Ի՞նչ տեղի ունեցավ դրանից հետո: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն ուժի մեջ թողեց Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի հունիսի 24-ի որոշումը:

2013թ. հուլիսի 1-ից հայտարարվեց հետախուզում՝ Գայանե Դավթյանին հայտնաբերելու համար:

2013թ. օգոստոսի 8-ին դատապարտյալի շահերի պաշտպան Մամիկոն Թորոսյանը ներկայացրեց միջնորդություն՝ Գայանե Դավթյանի վերաբերյալ 2012թ. հոկտեմբերի 5-ին կայացված դատավճռի կատարումը հետաձգելու մասին: Միջնորդության հիմքում այս անգամ դրվել էին Գայանեի հղի եւ ծանր հիվանդ լինելու փաստերը: Որքան էլ տարօրինակ է՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանն այդ միջնորդությանն անդրադարձավ մոտ երկու ամիս անց: Եվ միջնորդությունը քննարկեց 2013թ. հոկտեմբերի 14-ին (նախագահող դատավոր՝ Դ.Գրիգորյան, դատախազ՝ Հ.Պետրոսյան): Որոշվեց մերժել պաշտպան Մամիկոն Թորոսյանի միջնորդությունը՝ անհիմն լինելու պատճառով:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի այդ որոշումը, սակայն, բողոքարկվեց ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Դատական այդ ատյանը (նախագահող դատավոր՝ Կ.Ղազարյան) 2013թ. նոյեմբերի 19-ին բավարարեց պաշտպանի վերաքննիչ բողոքն ու բեկանեց Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2013թ. հոկտեմբերի 14-ի որոշումը: Մեկ տարի ժամանակով հետաձգվեց Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. հոկտեմբերի 5-ի դատավճռի կատարումը, որով Գայանե Դավթյանը մեղավոր էր ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին կետով եւ դատապարտվել չորս տարվա ազատազրկման:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2013թ. նոյեմբերի 19-ի նիստի նախօրեին՝ նոյեմբերի 12-ին, տեղի ունեցավ մի իրադարձություն, որը, կարծում ենք, էական նշանակություն ունեցավ դատական գործի ելքի վրա: Գայանե Դավթյանն այդ օրը մարեց «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությանն ունեցած 6 մլն 815 հազար 509 դրամի պարտքը, ինչի համար փաստորեն պատասխանատվության էր ենթարկվել: Այդ ընկերության տեղեկանքից իմանում ենք, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» Գայանե Դավթյանի նկատմամբ այլեւս որեւէ պահանջ չունի:

Նրա փաստաբանը համոզմունք է հայտնում, որ ՀՀ Աժ որոշումը՝ ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին, կտարածվի նաեւ Գայանե Դավթյանի վրա:

Նոյեմբերի 24-ին Գայանե Դավթյանն արդեն Սիսիանում էր…

ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ● 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ ● № 33 (306)

Ø²ð¼Æ ¶ÚàôÔºðÀ

Շաքե. պատմական ակնարկ

Ըստ Շչորս Դավթյանի

Սյունիքի հնագույն գյուղերից է: Նա էր, որ Շաղատից հետո Սյունիքի գյուղերի աթոռակարգության մեջ գրավում էր երկրորդ աթոռը: Հին ցուցակում Շաքեն ուներ 12 հարկաչափ եւ մտնում էր Այլախ ենթագավառի մեջ:

Եթե հավատանք Մորուս Հասրաթյանի վարկածին, ապա Սիսիանի հարուստ արոտավայրերն օգտագործելու նպատակով մ.թ.ա. 7-4-րդ դարերում այստեղ թափանցած եւ արդեն տեղական հայ-արմենական ցեղերի հետ խառնված, հայացած ու հայալեզու դարձած սակերի ցեղանունից է ծագում նաեւ Շաքե (սակե) անվանումը: «Բավական է սեղանի վրա փռած քարտեզին նայենք եւ կտեսնենք, որ Սյունի անունների (ավան, ամրոց, գավառ) կողքին կան ոչ հեռու Շաքե (տարածեւը՝ Սակ-սակէի) եւ Սիսիան (Սիսական) անունները», – գրում է Մ. Հասրաթյանը («Պատմահնագիտական ուսումնասիրություններ», էջ 122):

Հետագա աղբյուրներում Շաքեի վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ կան: Նույնիսկ Հայր Ալիշանը չի համարձակվում մեկնաբանել այդ հանգամանքը:

Շաքեն գտնվում է համանուն աղբյուրների ակունքում, որոնք ստեղծում են Շաքե գետակը եւ հիասքանչ Շաքեի ջրվեժը:

Անցյալ դարավերջին դեռեւս պահպանված է եղել Շաքեի վանքը: Ե. Լալայանը մանրամասն նկարագրում է այդ տաճարը, որի դռան բարավորի վրա եղել է հետեւյալ արձանագրությունը. «Շաքու եկեղեցին շինեցինք թ. ՌՀԵ.» (1626թ.): Նշանակում է, որ մինչ այդ Շաքեն շարունակել է հարատեւել, ըստ երեւույթին դեռ մի հարյուր հիսուն տարի էլ հետո: Այդպես մտածելու հիմքեր են տալիս նախ Սիսիանի մի շարք այլ հնությունների վրա պահպանված արձանագրությունները, ինչպես նաեւ 1781թ. Տաթեւի հարկացուցակում Շաքեի՝ մեծությամբ Սիսիանի երկրորդ գյուղը լինելու հանգամանքը (8850 դահեկան հարկով): Սիսիանի Ս. Գրիգոր Լուսավորչի տաճարում կա անթվակիր մի արձանագրություն՝ «Յիշեա Քս զՋուանշեր Շաքեոյ…», Աղիտուի մահարձանի վրա՝ «Ես Յովհաննես Շաքեո երեց. Սուրբ Նշանիս պաշտաւնէք յաղաւթս յիշեցէք» նույնպես անթվակիր արձանագրությունը:

Որ մինչեւ 1781թ. Շաքեում թուրքեր չեն ապրել, մեզ հուշում է նույն թվականի Տաթեւի եպիսկոպոսարանի մատյանը, որտեղ նշված է, որ Սիսիանի տարածքում ընդամենը հինգ թուրքաբնակ գյուղ կա (Աղիտու, Վաղատին, Որոտն, Փիրուլու, Գոմեր): Բայց թե ինչու մոտ 1000 հայ բնակիչ ունեցող Շաքեն ռուս-պարսկական պատերազմների ժամանակ ամբողջովին դատարկվեց, կարելի է միայն ենթադրություններ անել՝ հիմնական պատճառը փնտրելով նրա Սիսիան-Նախիջեւան բանուկ ճանապարհի վրա գտնվելու մեջ:

Ու թեեւ 1831թ. այնտեղ ընդամենը 48 հայ բնակիչ կար, սակայն նրանք էլ իրենց տեղը զիջեցին թուրքերին, ովքեր 50 տարի հետո 1000-ից ավելի էին: 1905-06թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ Շաքեի թուրքերը չափազանց ագրեսիվ դիրք են գրավում շրջապատի հայ գյուղերի նկատմամբ, նույնիսկ աշխարհազոր են կազմում՝ ավելի քան 1000 մարդուց բաղկացած, եւ նվագախմբի ուղեկցությամբ հարձակվում Անգեղակոթի վրա: Սակայն արժանի հակահարված են ստանում:

Նույն ձեւով են իրենց դրսեւորում նրանք նաեւ 1918-20թթ. եւ նույն ձեւով էլ պարտություն կրում: Այս հանգամանքը ստիպում է թուրքերին թողնելու գյուղը: Օգտագործելով այդ հանգամանքը, Անդրանիկ զորավարի թելադրանքով եւ աջակցությամբ Անգեղակոթից մի քանի տասնյակ հայ ընտանիքներ տեղափոխվում են Շաքե: 1920-ից հետո թեեւ թուրքերի մի մասը վերադառնում է, սակայն այլեւս չեն կարողանում գյուղում մեծամասնություն ունենալ:

Շաքե գյուղի մոտ կան բազալտի հսկայական քարհանքեր, որոնք այժմ էլ արդյունահանվում են: Հետաքրքրական է, որ Ե.Լալայանը պատմում է, թե Շաքե գյուղում գտնվել է քարե մի մեծ սարկոֆագ, որն այժմ գործածում են որպես ալյուրի շտեմարան: Նման մի սարկոֆագ էլ գտնվեց 1985թ.,ՊԻ(1371) թվագրությամբ, որն այժմ պահպանվում է Սիսիանի քարի թանգարանում: Նրա վրա պարզ կարդացվում են «Քաջ Գրիգոր» բառերը:

1988-ից հետո Շաքեի թուրքերը հեռացան եւ նրանց փոխարեն գյուղում բնակություն հաստատեցին Ադրբեջանից բռնագաղթած հայերը:

Հեռավորությունը Սիսիանից՝ 6կմ:

Շաքեում ստեղծվում է արոտային տնտեսությամբ զբաղվող կոոպերատիվ

«Սյունյաց երկրի» հարցերին պատասխանում է Շաքեի համայնքի ղեկավար Վահան Ղազարյանը

Սկիզբը՝ էջ 2

վճարում: Խնդիր ունենք նաեւ այն ընտանիքների հետ, որոնք հեռացել են գյուղից՝ մնալով անշարժ գույքի սեփականատեր: Ոմանք առաջարկում են՝ գործող օրենքով հետ վերցնել այդ ընտանիքներին պատկանող հողատարածքները, բայց ես դեմ եմ եւ հույս ունեմ, որ այդ մարդկանց մի մասը երբեւէ հետ կդառնա գյուղ:

– Համայնքային բյուջեի 25 մլն դրամով որեւէ հարց կարողանո՞ւմ եք գյուղում լուծել: Մանկապարտեզի մասին ասացիք, պահպանության ծախսեր, աշխատավարձ… Ուրիշ ի՞նչ խնդիր է լուծվում բյուջեով:

– Ընդամենն ընթացիկ հարցեր ենք լուծում՝ գույքի ձեռք բերում, ներհամայնքային ճանապարհների փոսային նորոգումներ: Մի ժամանակ գյուղի փողոցներում ուղղակի խայտառակ վիճակ էր: Եթե նկատել եք՝ հողով կարգավորել ենք: Ընթացիկ խնդիրները լուծելիս մեզ աջակցում են նաեւ տարածքի կազմակերպությունները, բնակիչներն էլ աջակցում են՝ ինչով կարողանում են:

– Իսկ ի՞նչ միջազգային ծրագրեր են իրականացվում գյուղում:

ՍՅՈՒՆՅԱՑ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ. ծնվել է 1958թ., ավարտել է գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել է 1981թ., աշխատել է գյուղատնտես, նախ՝ Ծղուկ գյուղում, ապա՝ Սիսիանի գյուղվարչությունում: Եղել է փորձադաշտի վարիչ: Ղեկավարել է տարբեր հիմնարկներ, աշխատել է կոմունիստական կուսակցության Սիսիանի շրջկոմի հրահանգիչ: 1998 թվականից, ընդհատումով, Շաքեի համայնքի ղեկավարն է: ՀՀԿ անդամ է:

– Համաշխարհային բանկի եւ հանրապետության գյուղնախարարության աջակցությամբ ստեղծվում է «Շաքի համայնքի արոտ օգտագործողների միավորում» կոոպերատիվ: Խոսքը մոտ 2000 հա արոտավայրերի մասին է: Այդքան լավ արոտավայրերն առայժմ իրենց նպատակին լիարժեք չեն ծառայում: Արոտներում ջուր ունենալու դեպքում դրանք կդառնան լուրջ բազա անասնապահության զարգացման համար: Ըստ ծրագրի՝ Մուխուրթունյան ջրաղբյուրներից ջուր կվերցնենք եւ Սպանդարյան ջրանցքից վերեւ գտնվող տարածքներում խմոցներ կտեղադրենք: Խորհրդային տարիներին այդ խնդիրը լուծվում էր պոմպակայանների միջոցով: Ջուրը կտրվեց եւ Շաքե համայնքը, կարելի է ասել, հայտնվեց անապատում: Ակնկալում եմ, որ 2014թ. մայիս-հունիս ամիսներին աշխատանքներն ավարտված կլինեն: Այդ ծրագրի շրջանակներում գյուղին տրամադրվելու է գյուղտեխնիկա՝ «Բելառուս» մակնիշի տրակտոր, հակավորող, ցանք անող, խոտ հնձող, խճաքար բարձող մեքենաներ: Դրանք լինելու են կոոպերատիվի սեփականությունը:

– Ովքե՞ր կարող են անդամակցել կոոպերատիվին:

– Գյուղացիները՝ ըստ ցանկության: Համայնքային արոտավայրերը կհանձնենք կոոպերատիվին: Ի դեպ, նման ծրագիր է գործում նաեւ Ծղուկ համայնքում: Հողի դիմաց կոոպերատիվը մեզ տալու է վարձավճար՝ հեկտարը 1000 դրամով՝ տարեկան: Ունենք նաեւ արոտավայրեր՝ հեկտարը 2500 դրամ վարձավճարով:

– Ի՞նչ փուլում է կոոպերատիվի ստեղծման գործընթացը:

– Արդեն եռակողմ պայմանագիր ենք կնքել՝ գյուղապետարան, կոոպերատիվ, ծրագրերի իրականացման գրասենյակ: Պայմանագիր է կնքվել նաեւ տեխնիկայի ձեռք բերման համար: Կոոպերատիվն ինքնուրույն տնտեսվարող սուբյեկտ է, գյուղապետարանը չի խառնվում նրա գործերին: Կոպիտ ասած՝ գյուղապետարանը միայն հողի վարձավճարի տերն է:

– Հիմա՝ գյուղի երիտասարդության մասին, չէ՞ որ առանց երիտասարդության խնդիրների լուծման հնարավոր չէ պատկերացնել գյուղի վաղվա օրը:

– Երիտասարդությունը, արդարացիորեն, իշխանություններից սպասելիքներ ունի: Զբաղվածության խնդիր ունի երիտասարդությունը: Ոմանք (10-15 հո-



ՇԱՔԵԻ ՋՐՎԵԺԻ ԼԵԳԵՆԴԸ

Շաքեի ջրվեժն իրավամբ համարվում է Սյունյաց բնաշխարհի «յոթ հրաշալիքներից» մեկը: Լեգենդն ասում է, թե երբ Լենկ Թեմուրը նվաճում է Սյունիքը, հմայվում է լեռնաշխարհի աղջիկների գեղեցկությամբ եւ հրամայում է իր զինվորներին հարեմը զարդարելու համար գտնել ու բերել ամենագեղեցիկին: Նրանք գյուղից գյուղ են շրջում, տնից տուն: Վերջապես գտնում են նրան, անունը՝ Շաքե, եւ հայտնում Թեմուրի հրամանը: Լսելով առաջարկը՝ Շաքեի սիրտը քար է կտրում, աշխարհը կարծես փուլ գալիս գլխին: Ու մինչ զինվորները պատասխանի էին սպասում, աղջիկը ծառս է լինում ու տեղից վազում դեպի Որոտանի կիրճը: Զինվորները հետապնդում են նրան: Ներքեւում քարափն էր: Շաքեն կամ պետք է ենթարկվեր նրանց, կամ էլ՝ կիրճը նետվեր: Գերադասում է երկրորդը: Ու այդ օրվանից էլ նույն 18 մետր բարձրությամբ կիրճից ձորը գահավիժող ջրվեժը կրում է այդ գեղանի աղջկա անունը:

Ø²ð¼Æ ¶ÚàôÔºðÀ

Զրույց հողին կպած, հողից բարիք արարող մարդու հետ

Վաղինակ Հարությունյանի անասնապահական ֆերմայում

Խորհրդային Միության փլուզումից հետո լուծարվեցին եւ պատմություն դարձան կոլտնտեսությունները ու խորհտնտեսությունները (սովխոզ): Գյուղմթերքների արտադրությունը դարձավ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների ու ֆերմերների մենաշնորհը: Թեպետ դրանք էլ այդ մթերքների արտադրության ճանապարհին շատ խոչ ու խութեր հաղթահարեցին (եւ հիմա էլ հաղթահարում են): Շատ հաճախ, ինչպես ասում են՝ տապակվելով սեփական յուղի մեջ: Լինելով Սիսիանում, որ նախկինում հայտնի էր իր գյուղատնտեսական «իմիջով», փորձեցինք գյուղատնտեսությամբ զբաղվողի մի օրինակով ծանոթանալ իրերի վիճակին այդ ճյուղում: Թեպետ քաջատեղյակ լինելով, որ անկախության տարիներին շատ բան թալանվել ու փոշիացվել է, մանավանդ Սիսիանի ոռոգման համակարգը:

Շաքին Սիսիանի տարածաշրջանի գյուղական խոշոր համայնքներից է, եւ ինչպես գյուղ այցելած «Սյունյաց երկրի» լրագրողներին տեղեկացրեց համայնքապետ Վահան Ղազարյանը, գյուղին պատկանող 1337հա հողատարածությունից մշակվում է մոտ հազարը, համայնքում կան կայացած մենատնտեսներ: Նրանցից մեկը Վաղինակ Հարությունյանն է, ավելի ստույգ՝ համայնքում առաջավորի համարում ունի Հարությունյան եղբայրների գյուղացիական տնտեսությունը, որ նաեւ ամենամեծն է Շաքիում: Նրա հիմնադիրը՝ Վաղինակ Հարությունյանը, միջնակարգ մասնագիտական կրթություն է ստացել, աշխատել շինանյութերի կոմբինատում՝ մեխանիզատոր, հետո՝ գյուղի խանութում վաճառող (ավարտել է Երեւանի առեւտրի տեխնիկումը): 1991-ին, երբ հողի սեփականաշնորհում եղավ, իրեն եւ հորը երկուական հեկտար հողակտոր բաժին հասավ: **«Հետո վարձակալությամբ,** – պատմում է, – **հող ձեռք բերեցինք, սկսեցինք մտածել գյուղտեխնիկա ունենալու մասին: Առաջին սեփական գյուղտեխնիկան «ՄՏԶ-82» (Մինսկի տրակտորի գործարան) տրակտորն էր, 1996-ից սկսած Ռազմիկ եւ Մայիս եղբայրներով մեջք մեջքի տալով գյուղացիական տնտեսությունը հասցրինք այսօրվա վիճակին»:**

Բնականաբար, անասնապահությամբ զբաղվողին խնդրեցինք ներկայացնել կոլեկտիվ տնտեսությունը: Թեպետ դրա մասին որոշակի պատկերացում տալիս էին խորհրդային տարիներից մնացած անասնագոմը (գյուղերի մեծ մասում դրանք կազմաքանդել եւ փոշիացրել են), դրա կողքի կոմբայնն ու կալսիչը, խոտի ու ծղոտի բարձր դեզերը: Ուստի մինչ հիմնական հարցադրմանն անցնելը հետաքրքվում եմ՝ խորհրդային արտադրության գյուղտեխնիկան խափանվելու դեպքում կարողանո՞ւմ են անհրաժեշտ պահեստամասը ձեռք բերել: Զրուցակիցս կանխում է հարցս. **«Միայն գրպանումդ փող լինի, ամեն ինչ կարելի է ձեռք բերել»:**

Ինչեւէ, այս գյուղացիական տնտեսությունում հիմնականում կովաբուծությամբ են զբաղվում, ունեն մոտ 150 խոշոր եղջերավոր, դրանց խնամքով յոթ-ութ անասնապահ է զբաղվում, արդեն նրանց երեխաներն էլ են ձեռք հասցնում: 350 հեկտար արոտավայր են վարձակալել, 100 հեկտար վարելահող ունեն, որից ստացվում է անասունների մսուրային պահվածքի համար անհրաժեշտ անասնակերը: Եվ, իրոք, անասնագոմի մոտի խոտի ու ծղոտի դեզերը վկայում են, որ խոտհնձի սեզոնին ձեռքերը ծալած չեն նստել:

Տնտեսության հիմնական արտադրանքը կաթն է, որի լիտրը 130-140 դրամով, բազիսային 3.6 տոկոս յուղայնությամբ, հանձնում են կաթնամթերք ու պանիր արտադրող «Սիս-ալպ» ընկերությանը (գործում է Սիսիանում) եւ ոչ անհայտ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ին: Մթերողները հանձնված կաթի դիմաց վճարը չեն ուշացնում: Դժգոհ չեն:

Անասնապահական մյուս մթերքի՝ մսի իրացման խնդիր ունեն: Ընդհանրապես մսի իրացման գործում գոյություն ունի մի շղթա՝ մենատնտես (միս է արտադրում), միջնորդ (մենատնտեսից գնում է միսը), վաճառող (իրացնում է միսը): Փոքրիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնորդ օղակին բաժին է ընկնում շահույթի զգալի մասը, եւ նա արհեստականորեն բարձրացնում է մսի գինը: Միսը միջնորդին է հանձնվում 1500-2000 դրամով, ինչը վաճառքի կետում իրացվում է 2500 դրամով: Մի խոսքով, միջնորդն ավելի է շահում, քան անասնապահական մթերք արտադրողը:

«Անցյալ տարվա մսացու ապրանքը մնում է, պահում ենք՝ տեսնենք գնի փոփոխություն կլինի՞, թե՞ ոչ: Մսի իրացման խնդիրն է մեզ խեղճացնում», – մտահոգություն է հայտնում Վաղինակը եւ հավելում, որ իրենք իրացնելու ոչ հնարավորություն ունեն, ոչ էլ ժամանակ: Բացի այդ միս գնողն էլ է քչացել, ուրեմն պահանջարկի խնդիր կա: **«Չարչարանքը շատ է, մի քիչ կաթի ու մսի գինը որ կարգավորվի, ամեն ինչ տեղը կընկնի»:**

Միջանկյալ ասենք, երբ պատրաստում էինք նյութը, «Հայկական ժամանակ» թերթում (23 նոյեմբերի 2013թ.) մի հրապարակում կարդացինք՝ «Միսն էժանանում է»: Տեղեկացանք, որ Հայաստանում նկատվում է մսեղենի էժանացում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերջին շրջանում, մասնավորապես, տավարի միսն էժանացել է 200 դրամով, եւ թերթն այն նկատառումն է հայտնել, որ մսի էժանացումը կարող է պայմանավորված լինել մորթի՝ սովորականից ավելի մեծ ծավալներով:

Իսկ, այնուամենայնիվ, ո՞րն է տնտեսության ամենաեղ օղակը, լրագրողի հերթապահ հարցին պատասխանում է, որ հիմնական խնդիրը գարնանը բարձրադիր արոտավայր վաղ բարձրանալն է, իսկ աշնանն այնտեղից ուշ իջնելը: Իսկ դրա համար յայլաղում մի ծածկ է անհրաժեշտ ունենալ, որ պատսպարան կլինի անասունների համար: Դրանով երեք ամսվա անասնակեր կխնայեն, ինչը զգալիորեն կկրճատի ծախսերը:

Նաեւ այն համոզմունքն ունի, որ այժմ գյուղմթերք արտադրողին արտոնություններ են տրված: Մասնավորապես նշում է, որ «Ագբա կրեդիտ ագրիկոլ» բանկի Սյունիքի մասնաճյուղից երեք մլն դրամ վարկ է վերցրել 14 տոկոսադրույքով, որի չորս տոկոսը փոխհատուցում է պետությունը: Անասնաբուժական սպասարկումից եւս դժգոհ չէ. պետպատվերի շրջանակում պատվաստումներ են կատարվում, պատվաստումների մի մասն էլ իրենք են անում, դիզվառելիքի եւ սերմացուի հայթայթման խնդրում էլ առանձնապես խոչընդոտների չեն հանդիպում:

Հողին կպած, հողից բարիք արարող մարդու հետ զրուցելիս անհնար էր, որ շրջանցեինք արտագաղթի թեման, ուստի հարցնում ենք. «Այդ ինչպե՞ս է, որ քեզ մոտ շատ բան ստացվում է, իսկ ոմանք գերադասում են քոչել հեռավոր ափեր»: **«Ես Ռուսաստանի տեղն էլ գիտեմ, էն մեկինն էլ ... հինգ եղբայրով մասնակցել ենք Արցախյան պատերազմին, նրանցից երկուսը վիրավորվել է, այս հողի վրա արյուն ենք թափել, ո՞ւմ թողնենք՝ գնանք: Գնանք, այլազգիների մեջ ո՞ւմ փնտրենք: Գիտես փողն ասֆալտի վրա փռվա՞ծ է Ռուսաստանում: Այնտեղ էլ օրնիբուն բանում են, որ մի վաստակի տեր դառնան: Այդքան աշխատելով՝ այստեղ էլ կարելի է նորմալ վաստակել: Սա մեր պապերի հողն է, այստեղ պիտի ապրենք, աշխատենք, ստեղծենք:**

Իմ զբաղվածությունը թույլ չի տալիս թերթ ու գիրք կարդալ, բայց մի քառատող տպավորվել է մեջս:

Օտարի տուն դու չգնաս
Եվ չտաս քո տունն օտարին,
Տանդ մնա եւ միշտ պահիր,
Օջախդ վառ, ասեմ, գնամ…:

Մեր մեծը՝ Համո Սահյանն է ասել. ինչպե՞ս կարելի է ականջի հետեւ գցել նրա պատգամը»:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

գի) արտագնա աշխատանքի են մեկնում, մարդիկ ուզում են շատ փող աշխատել, լավ ապրել, մի մասը բնակարանի կարիք ունի: Որոշներն էլ պարզապես ուզում են գյուղից տեղափոխվել: Նաեւ ամուսնանում են, այս տարի 12 ծնունդ ենք ունեցել, ծնունդները խրախուսում ենք…

– Այդ բոլորով հանդերձ՝ ո՞րն է, ըստ Ձեզ, գյուղապահպանության գլխավոր խնդիրը՝ Շաքեի օրինակով:

– Երիտասարդության զբաղվածության խնդիրն է գլխավորը. եւ՛ ամուսնություններ կլինեն, եւ՛ ծնունդներ… Երիտասարդության ժամանցի պայմաններ էլ պիտի ստեղծել:

– Բայց չե՞ք կարծում, որ ծուլությունն է մի տեսակ իշխող դարձել մեզանում:

– Չեմ ուզում նման խիստ գնահատականներ տալ երիտասարդներին, սակայն որոշ դեպքերում ծուլությունն ակնհայտ է: Ոմանք ուզում են իրենց գոյությունն ապահովել նպաստների միջոցով, ոմանք էլ իրենց համար աշխատանք են գտնում եւ չեն խուսափում անասնապահությունից, հողագործությունից: Մեր գյուղի կողքով ավտոմայրուղին է անցնում, այնտեղ մի շաքեցի չկա՝ խնձոր, կարտոֆիլ վաճառող, պատվից ցածր են համարում: Մարդն ինքը պետք է իր համար աշխատատեղ ստեղծի. իրավիճակն է այդպես պահանջում: Համենայնդեպս գյուղից հեռանալը ստեղծված իրավիճակից դուրս գալու ամենաօպտիմալ ելքը չէ:

– Չեմ ուզում հակադրվել Ձեր ասածներին, բայց պետությունն էլ պետք է անտարբեր չլինի գյուղի հիմնախնդիրների հանդեպ: Գյուղացին հողի հարկը վճարում է, գույքահարկը վճարում է, իսկ պետությունը…

– Վերջին շրջանում, կարելի է ասել, պետության մակարդակով ինչոր բան են փորձում անել: Պարարտանյութի խնդիրն է լուծվում, սերմերի հետ կապված որոշ տեղաշարժեր կան: Առանձին գյուղացիներ իրենք են փորձում սերմ արտադրել: Դիզվառելիքի հետ կապված շարժ կա: Ուղղակի գյուղացին կանխիկ դրամ չունի, ամիսներ շարունակ պարտք է մնում սերմի, դիզվառելիքի, պարարտանյութի համար:

– Բայց եւ գյուղատնտեսական աշխատանքի գներն են անվերջ բարձրանում, ու պետությունը չի փորձում զսպել այդ մրցավազքը: Դրա վերջն ի՞նչ է լինելու:

– Մեր գյուղի դեպքում, ինչպես ասացի, ստեղծվող կոոպերատիվը լուծումներից մեկն է: Ես հույս եմ կապում ձեռք բերվող գյուղտեխնիկայի հետ՝ գները կզսպվեն: Թե չէ կոմբայնի, տրակտորի սեփականատերը դարձել է նաեւ գին թելադրող: 10-12 հազար դրամով հունձ արվեց այս տարի. իհարկե աննորմալ վիճակ է, թեեւ խոսակցություններ կան, որ 2014-ին նոր թանկացումներ կլինեն այդ բնագավառում:

– Եվ ինչպե՞ս կարող ենք, այդ ամենից հետո, խոսել գյուղացու պաշտպանված լինելու մասին:

– Իհարկե պաշտպանված չէ, միայն մսի շուկայում տիրող վիճակը հերիք է, որ այդպես մտածենք:

– Մի կարեւոր հարց էլ կա, որ մտահոգում է մեզ: Շաքեն մեր մարզի այն համայնքներից է, որն իր տարածքում ունի մի շարք արտադրական օբյեկտներ՝ բազալտի հանքավայրեր (վեց հանքատեր), քարի մշակման արտադրամաս (ութ արտադրամաս), մեկ հէկ: Եվ բոլոր այդ օբյեկտները համայնքին միայն հողի հարկ են վճարում եւ գույքահարկ, մնացած հարկերը տրվում են պետբյուջեին…

– Ես հասկանում եմ Ձեր հարցի ենթատեքստը, հիմա էլ կասեք՝ ի՞նչ օգուտ գյուղին, որ բազալտի հանքավայր ունի իր տարածքում, հիդրոէներգետիկ ռեսուրսներ ունի… Բայց դա օրենսդրին առնչվող հարց է: Բոլոր համայնքներում կուզեինք, որ նման իրավիճակներում հարկերի մի մասը վճարվի համայնքին: Եվ համայնքները շահագրգռված կլինեն, որ գյուղի ընդերքը, գյուղի ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործվեն: Մեր պատգամավորները պետք է մտածեն այդ մասին, դա իրենց լիազորությունների մեջ է մտնում: Չեմ կարծում, որ Ազգային ժողովում նման հարց քննարկելիս որեւէ պատգամավոր դեմ քվեարկի: Նույնիսկ կարծում եմ, որ հատկապես քարի արդյունահանմամբ զբաղվող տնտեսվարողներից պետք է հօգուտ համայնքի բնապահպանական հարկ (տուրք) վերցնել: Չէ՞ որ բնությունն է փչանում, շրջակա միջավայրն ու օդային ավազանն են կեղտոտվում՝ մարդկանց առողջությանը վնաս պատճառելով:

– Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝
ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆԻ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ԵՐԵՔՇԱԲԹԻ • 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ • № 33 (306)

Մարզի գյուղացիները՝ մսամթերման անլուծելի խնդրի դեմ հանդիման

Հանքարդյունաբերության գերշահույթներից կուրացած եւ իրական Սյունիքից օտարված ցեցերն այդպես էլ չեն տեսնում, որ մարզի գյուղացին չի կարողանում մթերել սեփական անասունը, ինչից պետք է ստանա իր ընտանիքի գոյապահպանման միակ կամ գրեթե միակ միջոցը

ԱՆՕԳՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Սկիզբը՝ էջ 1

տական քաղաքականության համար պատասխանատու անձնավորությունը, որտե՞ղ է նա, ինչո՞ւ չի հաղորդվում գյուղական կյանքի լրջագույն այդ խնդրին:

Մարզի անասնապահության ծավալները հասկանալու համար՝ մի քանի տեղեկություն:

Վերջին մեկ տարում արձանագրվել է անասնագլխաքանակի աննախադեպ աճ. 2012թ. հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված 52500 խոշոր եղջերավոր անասունների թիվը 2013-ի հունվարի 1-ին դարձել է 56273 գլուխ (3773-ով ավելի), 2012թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված 86264 մանր եղջերավոր անասունների թիվը մեկ տարի անց դարձել է 101559 (15275-ով ավելի), նույն ժամանակաշրջանում 2835-ով ավելացել է խոզերի գլխաքանակը եւ դարձել 10586 գլուխ:

Անասնագլխաքանակի աճը շարունակվում է, ինչի վերաբերյալ վիճակագրական նոր տեղեկություններ կունենանք 2014թ. հունվարին:

Ինչո՞վ է պայմանավորված անասնագլխաքանակի աճը, եթե շուկայում անասնապահության համար ակնհայտ անբարենպաստ վիճակ է:

2013թ. օգոստոսին Սյունիքի մարզ այցելած գյուղնախարար Սերգո Կարապետյանն անհեթեթ հայտարարություն արեց՝ իբր գլխաքանակի նման աճը գյուղատնտեսության վերելքի անհերքելի ապացույցն է: Գյուղնախարարը, փաստորեն, չէր հասկացել (եւ մինչեւ հիմա էլ, դատելով գործերի վիճակից, չի հասկանում), որ գլխաքանակն ավելացել է, քանի որ մսամթերման գործը Սյունիքում տապալված է, որ անասունների իրացման գործը մարզում հասել է աննախադեպ ցածր նիշի:

Անասնագլխաքանակի (հատկապես՝ խոշորի) ավելացումն ունի մեկ պատճառ եւս, որը, անշուշտ, դրվատելի է: Գյուղացին շահագրգռված է կաթնային անասնապահության զարգացման մեջ, քանի որ կաթի մթերման հարցը շատ թե քիչ դրական ռելսերի վրա է դրված մարզում՝ շնորհիվ «Աշտարակ-կաթ» եւ «Էլոլա» ՓԲ ընկերությունների, «Սիսալպ» ՍՊԸ-ի (2012թ. հունվարի 1-ի համեմատությամբ 2013թ. հունվարի 1-ին կովերի քանակն ավելացել է 1015-ով եւ դարձել 26742): Կաթնարտադրությունն առայժմ այն բացառիկ ոլորտն է, որ գյուղացուն իրացման դժվարություններ չի հարուցում՝ մարդկանց ապահովելով նաեւ կանխիկ դրամով:

Խանածախ

Վերադառնանք մսամթերման խնդրին:

Շուկայի որոշ առանձնահատկություններ մատնացույց անելուց առաջ նշենք, որ ոլորտի պաշտոնական վիճակագրությունը քիչ կապ ունի իրականության հետ: Անգամ իրենք՝ վիճակագրության ոլորտի մասնագետներն ու գյուղական համայնքների ղեկավարները, մեզ հետ ունեցած զրույցներում թերահավատությամբ են խոսում ոլորտի վիճակագրության հավաստիության մասին: Իրոք, ինչպե՞ս են ձեւավորվում մսամթերման մասին վիճակագրական տվյալները:

Այդ բոլորով հանդերձ՝ վիճակագրական տեղեկություններն էլ մտահոգիչ են: Եթե 2012թ. Սյունիքի մարզում մթերվել է թռչնի եւ անասունի 12 հազար տոննա միս, ապա այս տարվա 11 ամսում՝ 9200 տոննա:

Մսամթերման գործի որոշ առանձնահատկությունների մասին:

Ստացվել է այնպես, որ անասունների առուվաճառքի շուկան (գուցե եւ ամբողջ հանրապետությունում) որեւէ կերպ կախված չէ պետական մարմիններից, այլ, մեծամասամբ, Արարատյան դաշտից ու մայրաքաղաքից եկող եզդիներից: Բայց նրանք էլ, կարծեք, նախկին ակտիվությունը չեն ցուցաբերում, ինչը հատկապես նկատելի է այս օրերին: Պատճառը, ըստ էության, պահանջարկի նվազումն է, որ կարող է պայմանավորված լինել բնակչության թվաքանակի եւ բնակչության մի մասի գնողունակության նվազմամբ:

Տարերային բնույթ ունի նաեւ դեպի Իրանի Իսլամական Հանրապետություն մանր եղջերավորների արտահանման գործընթացը: Նախ, որպես կանոն, այդ շուկան ունի միայն արու ոչխարի պահանջարկ: Այնուհետեւ՝ այդ շուկայից ամեն ոք չէ, որ կարող է օգտվել. դրանից օգտվելն առանձին մարդկանց մենաշնորհն է:

Անասնատերը խնդիր ունի նաեւ ներքին շուկայում՝ վաճառակետերի ու մսավաճառների հետ հարաբերություններում: Գինը, որպես օրենք, պարտադրում է մսավաճառը: Եվ, արդյունքում, վերջինս կամ միջնորդ օղակը ոչ պակաս շահույթ են ստանում, քան անասնապահը: Նաեւ այդ պատճառով է, որ մսի առաջարկի ավելացման եւ պահանջարկի նվազման արդյունքում (հակառակ տնտեսագիտության օրենքների) մսի շուկայական գինն այդպես էլ չի իջնում:

Իսկ ինչո՞ւ է այդ ամենից հետո գյուղացին շարունակում զբաղվել անասնապահությամբ: Պարզագույն այդ հարցին գյուղացին հարցով է պատասխանում՝ իսկ ուրիշ ինչո՞վ զբաղվել:

Իհարկե, գյուղացին կարող է գնի հարցում զիջումներ անել (եւ անում է), բայց դա էլ անվերջ չի կարող լինել (կա ծախսերը վերականգնելու խնդիր, անասունների վերարտադրության խնդիր եւ այլն): Եվ ստացվում է շուկայական գների փոխզիջումային մի պատկեր: Այսպես՝ ս.թ. նոյեմբերի վերջին, օրինակ, խոշորի մսի կիլոգրամը մսավաճառին էր տրվում 1500-2000 դրամով, որն էլ վաճառվում էր 2,5-2,8 հազարով: Ոչխարը հիմնականում վաճառվում է կենդանի քաշով՝ 1 կիլոգրամը՝ 800-1000 դրամ, որն էլ շուկայում իրացվում է 1900-2000 դրամով (գառան միսը՝ 2500-3000 դրամով): Խոզի մսի կիլոգրամը՝ 1800-2300 դրամից շուկայում դառնում է 2500-3000 դրամ:

Նոր տարվա առիթով, բնականաբար, մսի շուկայում որոշակի ակտիվություն կնկատվի, իսկ հետո կրկին կհաստատվի մեռյալ վիճակը:

Մսի շուկայում ստեղծված վիճակը, անտարակույս, մտահոգում է գյուղացիներին: Իսկապես, ի՞նչ անի գյուղացին, ով մի քանի կով կամ ոչխար է պահում, բայց չի կարողանում դրանց մի մասն իրացնել եւ ստացված գումարով երեխայի ուսման վարձը տալ, դեղորայք գնել հիվանդի համար, օգտագործված ջրի, էլէներգիայի, գազի ծախսերը հոգալ, հողի հարկը վճարել, տան համար առաջին անհրաժեշտության ապրանքներ ձեռք բերել…

Խնդիրը, հավատացեք, պետական մակարդակով քննարկման կարոտ է, եթե, իհարկե, մեզ հետաքրքրում է գյուղապահպանության հարցն առհասարակ:

Իսկ մինչեւ արմատական միջոցառումներ ձեռնարկելը գյուղացին պարզագույն մի քանի հարցի պատասխան է ուզում իմանալ:

Հնարավոր չէ՞ պետության կողմից գնվող մսի մի մասը ձեռք բերել Սյունիքից (ասենք, օրինակ, մարզում տեղաբաշխված զորամասերի համար գնվող միսը): Ո՞վ կարող է այդ հարցը բարձրացնել կառավարությունում՝ մարզպե՞տը, պատգամավո՞րը, միգուցե մյո՞ւս պատգամավորը:

Մի՞թե մինչեւ հիմա մսի պետգնումները շարունակում ենք կատարել այլ երկրներում՝ գոմշի, սագի կամ մեզ անհայտ ու հայտնի կենդանիների ու թռչունների մսի տեսքով:

Հնարավոր չէ՞, որ իշխանությունները մսամթերման հարցով զբաղվեն մոտավորապես այնպիսի խանդավառությամբ, ինչպես զբաղվում են, օրինակ, ծիրանի, լոլիկի, խաղողի իրացմամբ:

Հնարավոր չէ՞ պետական մակարդակով փոքր-ինչ կարգավորել ոչխարի արտահանումը եւ դրանից օգտվելու հնարավորություն ընձեռել նաեւ փոքր տնտեսվարողներին, անտեր գյուղացիներին:

Ի վերջո մինչեւ ե՞րբ պետք է մսամթերման գործը մատնված լինի տարերայնության: Մի՞թե ավարտված պիտի համարել նոր շուկաների որոնումը: Մի՞թե պետությունն այլեւս անելիք չունի այդ ոլորտում, եւ գյուղացին ինքն իր գլխի ճարը պետք է տեսնի:

Հա, բա էն մոլլայի նամազից հետո ինչպե՞ս են գործերը Կապանի նորակառույց սպանդանոցում, քանի՞ ոչխար մթերվեց անցած հինգ ամսում, ո՞ւմ ոչխարներն էին դրանք:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սյունիքի մարզոստանի քաղաքապետ պարոն Աշոտ Հայրապետյանին

Մեծարգո շահաբ

Իրազեկ եմ, որ Դուք բազմակի հոգածություններ ունեք պատմամշակութային խնդիրների նկատմամբ, եւ շատե՛րը հեռվանց կփառավորվեն Ձեր ձեռնարկումներով:

Կկամենայի, որ Ձեր գործունեությունը խարսխվի նաեւ պատմական իրողությունների վրա, որովհետեւ Կապանա անցյալն անզուգական, չպեղված սոփեր ու մատյանի արժեւորումներ ունի:

970թ. Սյունիքում կազմակերպվել է թագավորություն եւ գոյատեւ է մինչեւ 1170թ.՝ շուրջ 200 տարի: Թագավորության մայրաքաղաքն էր Հին Կապանը, որը 1881թ. մոտավոր տեղորոշել է Ռաֆֆին: Հետինները հիմնականում հետեւել են նրան եւ մեր հին ոստանը մատնանշել ներկայիս «Տանձուն լենջում»: Հին Կապանի տեղորոշման վերաբերյալ այժմ նոր տեսակետ կա, որին կանդրադառնամ Ձեզ հետ զրուցելիս:

Թագավորությունը կոչվել է երեք անունով, որոնք նույն քաղաքական կազմավորումն են՝ Բաղքի թագավորություն, Կապանի թագավորություն, Սյունիքի թագավորություն:

Թագավորությունը Մեծ Հայքի տարածքում վերջին ազգային պետականությունն էր: Դրանից միայն 550 տարի հետո Դավիթ Բեկը կարողացավ կազմակերպել Սյունիքի իշխանությունը, որը գոյատեւեց մոտ 9 տարի:

Գիտականորեն ապացուցված է, որ Բաղք եւ Կապան անուններն իմաստով նույնն են: Մեր հայրենի եզերքը թագավորության ժամանակ կոչվել է Բաղաց աշխարհ: Ներառել է Մեղրուց մինչեւ Հագարի, Արաքսից մինչեւ Սիսիան: Ունեցել է 43 բերդ, 48 վանք, 1008 գյուղ: Կենտրոնական հզորագույն ամրոցն էր Բաղաբերդը, որի ավերակները գտնվում են Բաղացսարի հարեւանությամբ՝ մի պատվական բարձրունքի վրա, որտեղից Ողջի եւ Գեղի գետերի ավազանները երեւում են, ինչպես դիտողի ափի մեջ: Կկամենայի, որ փափագ ունենաք՝ մեկ անգամ լինել այնտեղ: Հին Կապանն ավերվել է 1103թ., Բաղաբերդին տիրել են դավաճանների մատնությամբ՝ 1170թ.:

Կապանա տանն առաջինը թագավորել է Սմբատ արքան՝ 970-998թթ.: Նրան հաջորդել է Վասակ որդին՝ 998-1040թթ.: Այս Վասակ Սմբատյանն աներն էր Գագիկ Բագրատունի թագավորի: Վասակ արքայի դուստր Կատրամիդեն է կառուցել Անիի մայր տաճարի սրահակը: Վասակին հաջորդել է նրա քրոջորդի Սմբատ Ավագաշոտյանը, որովհետեւ Վասակն արու զավակ չի ունեցել: Երբ վախճանվեց Սմբատ Ահարկու թագավորը, թագավորեց նրա եղբայր Գրիգոր Ավագաշոտյանը, ում կինն էր բարեպաշտուհի Շահանդուխտ թագուհին՝ Վահանավանքը շենացնողներից մեկը: Սրանք էլ արու զավակ չունեին եւ թագաժառանգ բերեցին Շահանդուխտի եղբայր Սենեքերիմին (1072-1091թթ.): Սենեքերիմ թագավորի եղերական վախճանից հետո գահին բազմեց նրա որդի Գրիգորը: Այս թագավորն էլ մի դուստր ուներ՝ Կատա, եւ տնփեսա էր բերել ղարաբաղցի (այն ժամանակ՝ խաչենեցի) Հասան Սակռյանին: Կատան ու Հասանը ղեկավարեցին չորս տարի՝ մինչեւ Բաղաբերդի գրավումն էլդգյազ սելջուկի կողմից՝ 1170թ.:

Այսպիսով, մենք մեր ոստանում արքայական տուն ենք ունեցել, դինաստիա:

Յուրաքանչյուր ուսյալ կապանցի չի կարող անտարբեր լինել այս անզուգական պատմական իրողության հանդեպ: Փաստորեն՝ յոթ արքաների ոստան ենք (Դավիթ Բեկի ժամանակներում էլ Յոթնաբերդ Կապան անունն ենք ունեցել):

«Արքայական տունը» համայնավար իշխանությանը հաճո չէր, եւ կապանցիները (ղափանցիները) առիթ ու հնարավորություն չեն ունեցել՝ հպարտանալու իրենց հինավուրց պետականությամբ եւ արքաներով: Կապանա թագավորներից չորսը հանգչում են Վահանավանքում:

Ենթադրում եմ, որ Դուք հավանություն կտաք «Հին Կապան՝ Սյունիքի թագավորության մայրաքաղաք 970-1170թթ.» հուշամեդալի խմբագրման-ստեղծմանը: 2014-ը Սյունիքի (Կապանի) թագավորության կործանման 844-րդ տարին է: Ըստ հայր Ալիշանի հաշվարկի՝ այս տարի հռչակավոր Բաղաբերդի հիմնարկեքի 3863-րդ տարին է... Այս խնդիրների շուրջ մի ասուլիս է հարկավոր՝ մեր քաղաքի երկրպագուների համար:

Ողջույններ գյուղից՝ ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ
28 սեպտեմբերի 2013թ.

ø²Ô²ø²ÚÆÜ îÜî°êàôÂÚàôÜ

Համատիրությունների ձեւական գոյությունը վերանայելու ժամանակը

Սկիզբը՝ էջ 1

օրենքները: Ըստ դրանց՝ ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը կարող է իրականացվել շինության սեփականատերերի՝ բնակիչների կողմից ստեղծված իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համատիրությունների միջոցով:

Համատիրությունները Կապանում քսանն են՝ «Կենտրոն», «Գետափ», «Մուշեղ Հարությունյան», «Երկաթուղայիններ», «Սպանդարյան», «Զորավար Դավիթ Բեկ», «Լեռնագործներ», «Սյունիք», «Հունան», «Հունան-1», «Սարահարթ», «Զորք», «Հալիձոր», «Բաղաբերդ», «Բաղաբերդ-1», «Անդոկ», «Վահանավանք», «Զորք-1», «Գարեգին Նժդեհ-1» եւ «Աջափնյակ»:

Գործնականում ի՞նչ է իրենից ներկայացնում համատիրությունը:

Յուրաքանչյուր համատիրություն ունի իր կառավարիչը եւ հաշվապահը, երբեմն՝ աշխատանքային գրասենյակ, եթե ֆինանսական հնարավորություն է ունենում: Համատիրություններն ունեն իրենց բյուջեն, որի մուտքերը համալրվում են կամ ավելի ճիշտ պետք է համալրվեն բնակիչներից ստացած վճարների հաշվին եւ, շատ հազվադեպ, օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին, օրինակ՝ որեւէ անհատի կամ կազմակերպության ֆինանսական օժանդակությամբ: Ըստ օրենքի՝ չեն նախատեսվում պետբյուջեից կամ համայնքային բյուջեից պարտադիր սուբսիդիաներ կամ լրավճարներ (դոտացիաներ): Եվ այսպես՝ համատիրության բյուջեի եկամուտները հիմնականում գոյանում են բնակիչների վճարումներից: Այդ վճարները ենթակա են պարտադիր գանձման, իսկ գոյացած ֆինանսական միջոցների ծախսերն ամփոփվում են տարեկան հաշվետվության մեջ: Բայց թե այս պարզ թվացող համակարգը գործնականում ինչ դրսեւորումներ է ունենում՝ փորձեցի պարզել որեւէ համատիրության օրինակով:

….Զրուցակիցս Արշավիր Հարությունյանն է՝ «Սարահարթ» համատիրության նախագահը (այդ համատիրությունը ներառում է Շինարարների փողոցի մեկ տասնյակից ավելի բնակելի շենք): Նա համատիրության նախագահն է 1996 թվականից, իսկ մինչ այդ՝ երկար տարիներ, աշխատել է նաեւ տնային կառավարիչ: Նրա խոսքով՝ համեմատելու եզրեր չկան երկու այդ մարմնի՝ համատիրության եւ տնային կառավարչության միջեւ, որոնք գործառույթների առումով գրեթե նույնն են, բայց համատիրությունները, ի տարբերություն խորհրդային տարիների տնային կառավարչությունների, ունեն խիստ ձեւական բնույթ: Դրա համար զրուցակիցս նշեց մի քանի օբյեկտիվ պատճառ. չկա պետական կամ համայնքային իշխանությունների կողմից պարտադիր ֆինանսավորում, բնակչությունը չի մուծում վճարները, բյուջեի մուտքերը բավարար չեն անգամ հարկային պարտավորությունների կատարման համար: Նա ցույց տվեց նաեւ բյուջեի մուտքերը եւ ելքերը: Ամսական մուտքերը հավաքվող վճարներից կազմում են տասից

մինչեւ քսան հազար դրամ, որով հնարավոր է եղել իրականացնել մի քանի բակային նստարանների մասնակի վերանորոգում: Բնակիչները շատ դեպքում խուսափում են վարձը վճարել, որն այս համատիրությունում կազմում է՝ մեկ ընտանիքի մասով՝ միջինը 125-130 դրամ: Արշավիր Հարությունյանի կարծիքով՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու ելք կարող է լինել համատիրության եւ բնակիչների միջեւ պայմանագրի կնքումը, որում հստակ կարտացոլվի յուրաքանչյուր կողմի պարտավորությունը: Այդ ամենով հանդերձ՝ այս համատիրությունը, թերեւս, քաղաքի ամենահաջողակներից է կողմնակի ֆինանսական օգնություններ եւ միջոցներ ներգրավելու առումով: Համատիրության սպասարկման տարածքում փողոցներն ասֆալտապատվել են «ԶՊՄԿ» ՓԲԸ-ի ներդրումների հաշվին, իսկ շենքերի 75 մուտք լիովին վերանորոգվել է դրամաշնորհային միջոցներով: Ֆինանսական միջոցների ներգրավման առումով այսօրինակ հնարավորություններով քաղաքի ոչ մի այլ համատիրություն պարծենալ չի կարող:

Համատիրություններում, ինչպես նշեցի, մեծամասամբ տիրում է գորշ վիճակ, որն ուղղակի ակհայտ է դառնում յուրաքանչյուր շենքի մուտքից: Այն, որ համատիրությունները ձեւական բնույթ են կրում, եւս մեկ անգամ հավաստեցին նրանց կանոնադրությունները, որոնցում ուղղակի արտատպված են հատվածներ վերը նշված օրենքներից եւ ուրիշ ոչինչ՝ տեղական առանձնահատկություններն արտացոլող:

Այս ոլորտի ուսումնասիրությունն ամբողջական չէր լինի առանց համատիրություն եւ ՏԻՄ փոխհարաբերությունների դիտարկման, ուստի հանդիպեցի նաեւ Կապանի քաղաքապետարանի ծրագրերի բաժնի պետ Ավետիք Համբարձումյանին: Նրա նկատառումներից եւս պարզ դարձավ, որ համատիրությունները, մեղմ ասած, չեն արդարացնում իրենց: Ավետիք Համբարձումյանի խոսքով՝ համայնքի բոլոր ղեկավարներն էլ ժամանակին փորձել են հնարավորինս մասնակցել քաղաքի բնակֆոնդի պահպանությանը՝ չնայած օրենքով այդ պարտականությունը չի դրված քաղաքապետարանի վրա: Իրականացվել է, մասնավորապես, տանիքների հիմնանորոգում՝ ելնելով համայնքային իշխանության եւ մարզպետարանի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի առաջարկներից: Այդ հանձնաժողովն ամեն տարի համատիրություններից ստանում է շենքերի ցանկը, որոնց տանիքներն առավել վթարային են եւ ունեն հրատապ վերանորոգման կարիք: Ցանկը հաստատվում է, եւ բյուջեից (կամ դոնորներից) հատկացված միջոցների հաշվին կատարվում են աշխատանքներ: Նորոգված տանիքներով շենքերը հանձնվում են համատիրություններին՝ պայմանագրով, որով վերջիններս ստանձնում են դրանց հետագա պահպանության պարտականությունը: Այդ գործընթացն իրականացվում է արդեն 2-3 տարի, բայց միջոցների սղության պատճառով քաղաքի շենքերի տանիքների մի փոքր մասն է միայն վերանորոգվել: Ավետիք Համբարձումյանի խոսքով՝ համատիրությունների եւ համայնքի միջեւ պայմանագրի առկայության դեպքում առավել արդյունավետ համագործակցություն կարող է ծավալվել, եթե պայմանագրում հստակ համաձայնեցված ու ամրագրված լինեն յուրաքանչյուր կողմի պարտականությունները՝ ի շահ քաղաքի բնակֆոնդի պահպանության:

Խնդրո առարկայի կարգավորման տարբերակներից մեկն էլ համակարգային բարեփոխումը կարող է լինել: Ավետիք Համբարձումյանն այդ առումով ընդգծեց համատիրությունների խոշորացման անհրաժեշտությունը: Կապանի համայնքային ներկայիս իշխանությունը հանդես է եկել առաջարկությամբ. մի քանի ամիս առաջ համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը հանդիպել է համատիրությունների նախագահների հետ եւ առաջարկել՝ ինքնակամ լուծարել համատիրությունները, որից հետո միավորվել եւ Կապանում ստեղծել ընդամենը մի քանի համատիրություն: Կազմավորված առավել խոշոր համատիրությունների հետ քաղաքապետարանը պայմանագրային աշխատանքային հարաբերություն կստեղծեր, որը, անշուշտ, կբարձրացներ համատիրությունների գործունեության արդյունավետության մակարդակը: Սա, իրավամբ, առկա օրենսդրության պարագայում ամենախելամիտ լուծումը կարող էր լինել, բայց, ըստ Ավետիք Համբարձումյանի, համատիրությունների նախագահներից հնչեցին թե՛ կողմ, թե՛ դեմ կարծիքներ, եւ խնդիրն այդպես էլ մնաց օդում կախված:

Այս՝ իրավամբ խոցելի ոլորտը հիմնականում ունի հետեւյալ խնդիրները. նախ՝ Կապան համայնքի համար քսան համատիրության առկայությունը միայն աղճատում է առկա խնդիրների լուծման հնարվորությունները եւ առաջ բերում խոշորացման անհրաժեշտություն: Խորհրդային տարիներին, երբ քաղաքի բնակչության թիվն անհամեմատ ավելի շատ էր, տնային կառավարչությունների թիվը (եթե համարենք, որ նույն առաքելությունն ունեցող մարմին էր) ընդամենը վեց (կամ յոթ) է եղել: Համատիրությունների կրճատման կամ խոշորացման արդյունքում կկրճատվեն նաեւ բնակչության վճարումներից գոյացած բյուջեով պահվող որոշ խիստ ձեւական հաստիքներ, եւ այդ միջոցները կուղղվեն շենքերի պահպանմանը: Բացի այդ, առավել խոշոր համատիրությունները կարող են պայմանագիր կնքել քաղաքապետարանի հետ, եւ յուրաքանչյուրը կգբաղվի որեւէ կոնկրետ խնդրի լուծմամբ կամ որոշակի առաքելությամբ:

Կա նաեւ վճարների հավաքման ակնհայտ խնդիր: Ո՞րն է դրա պատճառը: Մեր կարծիքով՝ նախեւառաջ գոյություն ունի անվստահության խնդիր: Բնակչությունն իսկապես ունի լուրջ վերապահումներ համատիրություններին վստահելու հարցում, քանի որ վճարների հավաքման եւ դրանց ծախսման գործընթացը թափանցիկ չէ, եւ բնակչությունը, անգամ վճարունակ հատվածը, չի պատկերացնում, թե ինչ է կատարվում այդ՝ թեկուզ եւ փոքր գումարների հետ: Ընդ որում՝ անվստահություն կա ոչ միայն կոնկրետ համատիրության, այլեւ ամբողջ համակարգի եւ դրա նպատակահարմարության նկատմամբ: Այդ անվստահությունը հանգեցնում է նրան, որ վարձ վճարող բնակիչների թիվն ավելանալու փոխարեն նվազման միտում ունի, կան տարիներով կուտակված պարտքեր, չկան դրանց մարման կամ հավաքման մեխանիզմներ: Անվստահության պատճառներից մեկն էլ անիրազեկությունն է. բնակչության մի ստվար զանգված չի տիրապետում համատիրության գործունեության մասին որեւէ տեղեկության: Ելքը կարող էր լինել այն, օրինակ, որ համատիրությունները տարեկան գոնե երեքից չորս անգամ հանդես գային ամփոփ հաշվետվությամբ, որը կներառեր տեղեկատվություն վճարների հավաքման վիճակի, հավաքված գումարով իրականացված աշխատանքների մասին (եթե կլինեն այդպիսիք), ներկայացվեին առաջիկա պլանները կամ աշխատանքային նախագծերը: Վերջինս հատկապես կարող էր լավ շարժառիթ ծառայել, որ բնակիչները սկսեին վճարել: Ո՞ր գիտակից քաղաքացին, ի վերջո, չի վճարի այդ չնչին գումարը, եթե գիտենա եւ վստահի, որ դրանով ժամանակ անց իրենց բակում կամ շենքում ինչ-որ բան կարվի: Իսկ վճարի չափը դժվար թե լավատեսության տեղ թողնի: Դա Կապանում կազմում է 6-7 դրամ 1 ք.մ-ի համար, ինչն աներեւակայելի ցածր է: Համեմատության համար նշեմ, որ Երեւանում 1ք.մ-ի համար միջին վճարը հասնում է մինչեւ 300 դրամի: Մեզանում գործող վճարի չնչին չափն արդեն հուշում է, որ, եթե անգամ բոլորը վճարեն նախատեսված գումարը, միեւնույն է, ոչինչ փոխել կամ որեւէ էական աշխատանք իրականացնել հնարավոր չէ: Վճարները, կարելի է ստույգ ասել, կրում են ուղղակի ձեւական բնույթ եւ ունեն վերանայման կարիք, եթե պիտի հանդուրժվի համատիրությունների գոյությունը:

Ոչ պակաս մեկ կարեւոր խնդիր եւս՝ օրենսդրական դաշտի անլիարժեքությունը համատիրությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունների շուրջ. եթե օրենքը կարգավորեր դրանք՝ տեղափոխելով փոխադարձ պարտավորությունների եւ իրավունքների դաշտ՝ ի շահ հանրային սեփականություն հանդիսացող գույքի պահպանման, ապա պատկերը կարող էր լիովին փոխվել:

Իսկ միգուցե գործող համատիրություններն առհասարակ (որպես առանձին իրավաբանական անձ) լուծարե՞նք եւ Կապան համայնքում ստեղծենք մեկ-երկու համատիրություն ու պայմանագրով կարգավորենք քաղաքապետարանի հետ հարաբերությունները, ինչպես եւ հարաբերությունները բնակիչների հետ:

Թվարկված եւ շատ այլ խնդիրներ ամբողջացնում են անմխիթար վիճակի պատկերը, որ առկա է քաղաքի ծերացող եւ պահպանության ու խնամքի կարիք ունեցող շենքերում: Ավելին՝ պահպանությունից զատ կա նաեւ բազմաբնակարան շենքերի անվտանգության խնդիր (կրող կառույցների հնացած, երբեմն քայքայված լինելու պատճառով), որն առավել հրատապ է: Այնպես որ քաղաքային տնտեսության այդ ոլորտը շուտափույթ միջամտության կարիք ունի: Եվ ուզում ենք հուսալ, որ օրենսդրական կամ վարչական փոփոխությունների շնորհիվ խնդրո առարկայի կարգավորումը կընթանա խելամիտ եւ արդիական պահանջներին համահունչ ճանապարհով:

ԱՐՓԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սյունյաց երկիր
www.syuniacyerkir.am

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ■ ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ● 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2013Թ ● № 33 (306)

Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի հայտարարությունը

Հարգելի բաժանորդներ

Եղե՛ք ուշադիր գազի օգտագործման ժամանակ: Հնարավոր վթարներից եւ դժբախտ դեպքերից խուսափելու համար պահպանեք հետեւյալ պահանջները.

- օգտվեք միայն գործարանային արտադրության եւ ավտոմատ սարքերով հագեցված գազասարքերից,
- օգտվեք միայն գազի ծառայության կողմից թույլատրված եւ գազիֆիկացման նախագծով նախատեսված գազասարքերից: Մի՛ կատարեք գազասարքերի ինքնակամ տեղադրում կամ տեղափոխություն,
- ջեռուցման սարքերից եւ ջրատաքացուցիչներից օգտվեք ծխատար ուղիների քարշը պարտադիր ստուգելուց հետո: Սարքը գործարկելուց 3-5 րոպե հետո կրկին անգամ ստուգեք ծխատարի քարշը,
- օգտագործվող գազասարքերը մի թողեք առանց հսկողության եւ շահագործեք միայն ընտանիքի չափահաս անդամների կողմից: Գազասարքերի երկարատեւ օգտագործման ընթացքում հաճախակի օդափոխեք շինությունը,
- խստիվ արգելվում է ազդանշանային սարքն անջատել հոսանքից, իսկ ազդանշանը գործելու դեպքում անհապաղ դիմեք 1-04 ծառայությանը եւ ոչ մի դեպքում ինքներդ մի բացեք կափույրն ու մի վերականգնեք բնակարանի գազամատակարարումը:

Հարգելի բաժանորդ, առջեւում ձմեռ է, լինենք զգոն եւ միասին ապահովենք մեր անվտանգությունը:

Կառուցվում է Արցախյան ազատամարտում զոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող կոթող

ԳՈՐԻՍ

Սուրեն Խաչատրյանի նախաձեռնությամբ եւ միջոցներով Գորիսում կառուցվում է Արցախյան պատերազմում զոհված հայրենակիցների հիշատակը հավերժացնող հուշակոթող: Այն կառուցվում է Մեծ հայրենականում զոհված գորիսեցիների հիշատակը հավերժացնող հուշահամալիրի տարածքում:

Մինչ այսօր հիմնանորոգվել է տարածքի լողավազանը, կառուցվել նոր ջրատար:

Բոլոր այդ աշխատանքները կարժեան մոտ 100 մլն դրամ:

Ինչպես տեղեկացրեց աշխղեկ Կամո Միրաքյանը՝ *«Աշխատանքները սկսել ենք 2010թ. ապրիլին, ծգտում ենք գործն ավարտին հասցնել մինչեւ 2014թ. մայիսի 9-ը, եթե, իհարկե, եղանակային պայմանները թույլ տան: Ֆինանսավորման, նյութերի խնդիր չկա, գործում ընդգրկված են գորիսեցի լավագույն քարագործ-վարպետները: Օգտագործում ենք Անգեղակոթի բազալտ, որն ավելի հարթ է, կարծր, չունի ծակոտկենություն: Անգեղակոթից քարի տեղափոխումն իրականացնում է «Ոսմար» ՍՊԸ-ն (տնօրեն՝ Արթուր Մարտիրոսյան): Ներկայումս աշխատում ենք հաղթանակի կամարի վրա, որը կունենա 16մ բարձրություն: Միաժամանակ բարեկարգվելու է ամբողջ տարածքը, ստեղծվելու է հանգստյան գոտի: Հուշահամալիրի տարածքում կկառուցվի նաեւ թանգարան՝ ցուցասրահով ու ֆոնդերի սրահով, կցուցադրվեն Արցախյան ազատամարտում զոհված գորիսեցիների լուսանկարները, թանգարանում կհավաքվեն ու կպահպանվեն պատերազմին առնչվող նյութեր»:*

ՆՈՒԲԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՆԻԵԼՅԱՆ. «Ես արդեն իսկ երջանիկ եմ, ունեմ այն, ինչ պետք է ունենայի»...

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՓՈՐՁ

Ինքնուրույն դիմագիծ ու ոճ ունեցող կապանցի Դավիթ Դանիելյանը շարունակում է իր արվեստով՝ նկարչությամբ, զարմացնել հասարակությանը: Նորօրյա խնդիրներ կամրջած՝ իր նկարներն արդեն հասել են բազմաթիվ նշանավոր մարդկանց դատին: Երբ զրուցում ես Դավթի հետ՝ ակնհայտ երեւում են արվեստագետի հոգին, տեսակետը: Անկեղծ զրույց, որի ընթացքում քիչ թե շատ փորձեցի ճանաչել Դավիթ Դանիելյան նկարչին: Նրա գործունեությանը միշտ հետամուտ են լինում թե՛ դպրոցական եւ թե՛ ուսանողական ընկերները: Բոլորն էլ հպարտանում են Դավիթ երիտասարդով եւ Դավիթ արվեստագետով:

«Ծնվել եմ 1992թ. սեպտեմբերի 2-ին՝ Կապան քաղաքում՝ արվեստագետի ընտանիքում: Հորիցս (նկարիչ Հ. Դանիելյան) ժառանգած այս շնորհքն ամենամեծ նվերն է իմ կյանքում: Հիշում եմ, երբ դեռ փոքր էի, միշտ արվեստանոցում հետեւում էի հայրիկիս աշխատանքին:

2002թ. ընդունվեցի Կապանի արվեստի դպրոց, այնուհետեւ 2004թ. ընդունվեցի գեղարվեստի դպրոցի գեղանկարչության բաժին: 2008թ. սկսած մասնակցել եմ մի շարք ցուցահանդեսների եւ մրցույթների՝ արժանանալով մրցանակների ու պատվոգրերի: 2008թ. մասնակցել եմ միջազգային մրցույթի՝ Ղրղզստանի առաջին տիկնոջ կողմից արժանանալով հատուկ մրցանակի: 2009թ. ընդունվեցի Երեւանի գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիայի դիզայնի բաժին, սակայն երկրորդ կիսամյակում փոխեցի բաժինս՝ ընտրելով ինտերիեր-դիզայն բաժինը: Այս կյանքում շատ բան կա, որ արժեւորում ու կարեւորում եմ. դրանցից մեկը ծառայությունն է: 2010թ. նոյեմբերին զորակոչվեցի հայոց բանակ: Ծառայությունս պատվով կատարեցի, եւ ինձ շնորհեցին ավագ սերժանտի կոչում: Այժմ ուսումս շարունակում եմ, երրորդ կուրսի ուսանող եմ: 2010թ. 2-րդ կարգի դիպլոմի արժանացա ակադեմիայի ռեկտորի՝ Ե.Սեդրակյանի կողմից՝ ուսանողական ցուցահանդեսին ակտիվ մասնակցության համար: Երբ նկարում եմ, դառնում եմ սիրահար՝ իմ պատկերացրած բնության ու իմ կտավի սիրահարը, ում սիրտն ամեն մի գույնի, ամեն մի խազի համար բաբախում է: Գեղեցիկը, բարին ու մաքրությունն իմ աջ ձեռքի ուղեկիցներն են: Դրա վառ ապացույցն է վերջերս կայացած ցուցահանդեսս՝ «Բնության գույներ» խորագրով, որտեղ ներկայացրել եմ շուրջ 50 աշխատանք: Իմ անշունչ ընկերները՝ վրձինը, մատիտը, ջրաներկը, գուաշն ու պաստելն անդավաճան իմ կողքին են, նրանք մտորումներիս արտահայտումն են»:

– Ինքդ արվեստագետ լինելով՝ ինչ ես կարծում, ի՞նչ է արվեստը.

– Արվեստը ներդաշնակության ծնունդն է՝ մարդ-տիեզերք, հոգի-բնություն... Եվ այն չունի ճիշտ ու սխալ, քանի որ ստեղծողի հոգու, զգացածի ու ներաշխարհի յուրովի արտացոլումն է...

– Համարո՞ւմ ես քեզ երջանիկ... ունե՞ս արդյոք երազանքներ:

– Ես արդեն իսկ երջանիկ եմ, ունեմ այն, ինչ պետք է ունենայի: Երազանքներս անսպառ են: Ասել, թե չեն իրականանում՝ սխալ կլինի: Երազանքներս դարձնում եմ նպատակ: Շնորհակալ եմ Աստծուն, շնորհակալ եմ իմ ընտանիքին ու ընկերներիս: Այս եռամիասնության շնորհիվ է, որ սիրում եմ կյանքն ու իմ վրձնով գունավորում այն: Ինչպես կասեր Գորկին. «Տաղանդը հավատն է իր ուժերի նկատմամբ»: Ես ունեմ այդ հավատը, եւ այն ինձ օգնում է հաղթահարել ամեն դժվարություն:

Անգլիացի աստվածաբան, պատմաբան եւ կենսագիր Ֆուլլերն ասել է. «Բարի համբավն ավելի լավ է գեղեցիկ դեմքից»... Հուսանք, որ Դավիթը մեծ հաջողությունների կհասնի եւ իր նկարներով դեռ շատ ասելիք կունենա...

Նկարիչների միությունը միշտ էլ աջակցել է երիտասարդ ստեղծագործողներին: Հենց այդ առիթով նոյեմբերի 13-ին կազմակերպվել էր երիտասարդ ստեղծագործողների ցուցահանդես, որին մասնակցում էր նաեւ կապանցի երիտասարդը:

Ուրախ ենք, որ Կապանում կան այնպիսի երիտասարդներ, ովքեր ոչ միայն հանրապետությունում, այլեւ արտերկրում կարողանում են հնչեցնել մեր քաղաքի անունը:

ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆ

««Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն» ՀԿ

Նոյեմբերի 21-ին ««Ծիածան» առաջնորդների կրթական կենտրոն» ՀԿ-ն ամփոփեց կարիերայի պլանավորման եւ զարգացման կենտրոնի կատարած աշխատանքը: Ծրագրի նպատակն է նպաստել երիտասարդության շրջանում այնպիսի միջոցառումների իրականացմանը, ինչպիսիք են՝ հանդիպումներ գործատուների հետ, մասնագիտական կողմնորոշմանը նպաստող բանավեճեր: Արդյունքը եղավ այն, որ յուրաքանչյուրը քիչ թե շատ կկարողանա առավել արդյունավետ պլանավորել եւ զարգացնել իր կարիերան:

Ծրագրի շրջանակներում եղան մի շարք հանդիպումներ ու քննարկումներ, որոնք միջոցառման հենց սկզբում ցուցադրվեցին էկրանի վրա: Երեխաների հետ հանդիպեցին ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակից Սամվել Մկրտչյանը, ԵԱՀԿ-ի տնտեսական եւ բնապահպանական ծրագրերի պատասխանատու Թոմաս Դեմսկուն, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ-թերապեւտ Գրետա Սարգսյանը եւ այլք: Հանդիպում եղավ նաեւ «Սյունյաց երկիր» թերթի աշխատակցի հետ:

««Ծիածան» ԱԿԿ» ՀԿ-ի նախագահ Ս.Մարտիրոսյանը շնորհավորեց իր սաներին եւ ընդգծեց հետեւյալ միտքը. «Երիտասարդների հետ աշխատանքում առավել շեշտադրվում է անհատի մասնագիտական եւ քաղաքացիական կարողությունների զարգացումը, որի նպատակն է օժանդակել նրանց շարունակականության ապահովմանը՝ մի կողմից՝ որպես մասնագետի, մյուս կողմից՝ հասարակության անդամի: Ես հավատում եմ, որ այն գաղափարները, որոնք ուսուցանվեցին այստեղ, երիտասարդների սեփականությունն են դառնալու»:

Երեխաներն ստացան վկայագրեր, իսկ դասընթացավարներն արժանացան պատվոգրերի: Դասընթացի մասնակիցներն իրենց շնորհակալական խոսքն ուղղեցին տիկին Մարտիրոսյանին: Անի Շահնազարյանը, ով N1 դպրոցի աշակերտուհի է, հետեւյալն ասաց. «Մասնագիտական կողմնորոշման խնդիրն առավել քան կարեւոր է մարզերում ապրող երիտասարդների համար: Նրանք կարիք ունեն կարիերայի պլանավորման վերաբերյալ արդիական տեղեկատվության: Կենտրոնը նպաստում է մեզ այդ հարցում»: Իսկ Արեն Դավթյանը հավելեց. «Ես այստեղ հնարավորություն ստացա մանրամասն ուսումնասիրելու այն մասնագիտությունը, որն ընտրել եմ եւ որում ես ցանկանում եմ կերտել իմ կարիերան: Ստացա կարեւոր գիտելիքներ, որոնք ինձ անհրաժեշտ կլինեն իմ հետագա ուղին կերտելու գործում»:

Հուսով ենք, որ այս ամենը շարունակական բնույթ կկրի...

ՄԱՆԵ ԴԱՎԹՅԱՆ

Սյունյաց երկիր
ՏԱՍՆՕՐՅԱ ԹԵՐԹ

Գլխավոր խմբագիր՝
ê ²Ø ì °È ²È °øê ²ÜÚ ²Ü

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 06 28 02:
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 02.12.2013թ.: